

**ԱՇԽԱՐՀԻ ՉԱՅ
ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ**
ARMENIAN MUSICIANS OF THE WORLD

ԱՇԽԱՐՀԻ ՉԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

ARMENIAN MUSICIANS OF THE WORLD

9 հատոր
volume

VIVA^{CELL} MTS

VIVA^{CELL} MTS

**ԱՇԽԱՐՀԻ ՉԱՅ
ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ**
ARMENIAN MUSICIANS OF THE WORLD





ԱՇԽԱՐՀԻ ՉԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

ARMENIAN MUSICIANS OF THE WORLD

Երևան • 2015 • Yerevan



ՀԴՏ 78
ԳՄԴ 85.31
Ա 653

Ա 653
Աշխարհի հայ երաժիշտները-2.-
Եր.: Անտարես, 2015.
128 էջ

Amenian Musicians
of the World-2
Yer.: Antares, 2015.
128 pp.

Երևան
© Անտարես 2015

Աշխարհի հայ երաժիշտները-2 գիրքը ներկայացնում է տարբեր երկրներում գործունեություն ծավալող ու ճանաչում գտած հայ երաժիշտներին:

Armenian Musicians of the World-2
The book represents famous Armenian musicians from all over the world.

Նախատեսված չէ վաճառքի համար
Not for sale.

Բոլոր իրավունքները պաշտպանված են
All rights reserved.

Գրքի վրա աշխատել են՝	Project team
Տաթևիկ Սայադյանը	Tatevik Sayadyan
Մուշեղ Գարուկյանը	Mushegh Garukyan
Աննա Բեգլարյանը	Anna Beglaryan
Էսթեր Խանիկյանը	Ester Khanikyan
Ասթինե Բալասանյանը	Astine Balasanyan
Աննա Գրիգորյանը	Anna Grigoryan
Թագուհի Կարապետյանը	Taguhi Karapetyan
Ներսես Մարտիրոսյանը	Nerses Martirosyan
Արմեն Մելքումյանը	Armen Melkumyan
Ռուզաննա Շահինյանը	Ruzanna Shahinyan
Արմեն Անանյանը	Armen Ananyan
Դավիթ Բոյաջյանը	Davit Boyajyan

Նախագծի ղեկավար՝ Ռաֆայել Հովհաննիսյան	Head of project Rafael Hovhannisyan
--	--

ISBN 978-9939-51-825-1

«Դ-Տելեկոմ» ՓԲԸ, 2015
“K-Telecom” CJSC, 2015

«Համահայկական աշխարհագրական ասոցիացիա», 2015
“Panarmenian Geographic Association”, 2015



ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

ARMENIAN MUSICIANS OF THE WORLD

Բովանդակություն	Contents
Ներածական խոսք	4 Opening Address
Նախաբան	6 Preface
Աշխարհի հայ երաժիշտները	8 Armenian Musicians of the World
ՄԱՍ 1	PART 1
Կոմիտաս	10 Komitas
Սայաթ-Նովա	24 Sayat-Nova
Զիվանի	32 Jivani
Հավասի	34 Havasi
ՄԱՍ 2	PART 2
ԱՄՆ	36 USA
Ավստրիա	58 Austria
Թուրքիա	64 Turkey
Լեհաստան	68 Poland
Լիբանան	76 Lebanon
Ռուսաստան	80 Russia
Սերբիա	100 Serbia
Ֆրանսիա	104 France

Երևան • 2015 • Yerevan

ԱՇԽԱՐՀԻ ՉԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

ARMENIAN MUSICIANS OF THE WORLD

Հարգելի՛ ընթերցող

«Աշխարհի հայ երաժիշտները» շարքի երկրորդ հատորում շարունակում ենք պատմել տաղանդավոր հայորդիների մասին, որոնք իրենց հետքն են թողել համաշխարհային երաժշտարվեստում: Չուսով եմ, որ այս պատմությունները կոգեշնչեն Ձեզ և կօգնեն առավել խորությամբ ճանաչելու հայ մշակութային ժառանգությունը:

Գրքի խորագիրը հուշում է մեր ժողովրդի արհավիրքներով լի պատմության և ստեղծագործ ոգու հարատևության մասին, Ցեղասպանության սարսափով անցած ժողովրդի մասին, որն օտար ավերում, հայրենի հողից արմատախիլ եղած, չի դադարել երազել, հավատալ ու արարել: Արվեստը եղել է մեր պատասխանը անցյալի, ներկայի ու ապագայի մարտահրավերներին:

Ուստի, մեզ ժառանգություն թողած Հայաստանը լոկ քարտեզի վրա պատկերված հողակտորը չէ: Հայաստանը մեր կողմից ստեղծված համամարդկային, սահմաններ չճանաչող արժեքներն են՝ այն հոգևոր կամուրջները, որոնք կապում են աշխարհասփյուռ հայերին հայրենիքի հետ և մեր խոսքը փոխանցում աշխարհին: Հայաստանը մարդիկ են, ում կյանքն ու գործունեությունը ոգեշնչում են մեզ և հպարտությամբ լցնում մեր սրտերը:

«Աշխարհի հայ երաժիշտները» հրատարակությունն օժտված է հանրագիտարանային բացառիկ արժեքով, քանի որ անդրադառնում է թե՛ աշխարհահռչակ և թե՛ լայն հասարակության կողմից դեռևս չբացահայտված տաղանդավոր հայազգի երաժիշտների ստեղծագործություններին: «Աշխարհի հայ երաժիշտները» ՎիվաՍել–ՄՏՍ–ի համեստ ներդրումն է ազգային մշակույթի արժևորման և պահպանման գործում, քանզի մենք գիտակցում ենք, որ գնահատելով և համալրելով ազգային արժեքների գանձարանը՝ ստեղծում ենք կայուն ու բարեկեցիկ ապագայի երաշխիքներ:

Համոզված ենք, որ «Աշխարհի հայ երաժիշտները» շարքը, ՎիվաՍել–ՄՏՍ–ի և «Համահայկական աշխարհագրական ասոցիացիայի» համագործակցությամբ կազմված՝ «Աշխարհի հայկական հուշարձանները» քառահատոր հրատարակության հետ միասին, Ձեր անբաժան ուղեկիցը կլինի մեր հոգևոր ժառանգությունն ավելի լավ ճանաչելու ճանապարհին:

Ռալֆ Յիրիկյան
ՎիվաՍել–ՄՏՍ–ի գլխավոր տնօրեն



Dear reader,

In the second volume of “The Armenian Musicians of the World” we continue presenting remarkable Armenians, who have left their mark in the history of world music. I hope that these stories will inspire you and will provide with a deeper insight into the Armenian cultural heritage.

The title of the book speaks of our nation’s history, full of adversities, and of the persistence of our creative spirit. It speaks of a nation which has survived Genocide, yet, torn from the roots of the Fatherland, has never ceased to dream, believe and create. Art has been our answer to past, present and future challenges.

That is the reason why Armenia we have inherited is not merely the spot on the map. It is the timeless values created by us, those spiritual bridges which connect the Armenians across the world with their Fatherland and get our message to the world. Armenia is the people whose life and works inspire us, filling our hearts with pride.

“The Armenian Musicians of the World” has exceptional encyclopedic value since it features both world-known artists and talented musicians not yet discovered by the wide audience. “The Armenian Musicians of the World” is VivaCell–MTS’ modest contribution to the cause of appreciating and preserving our culture, for we realize that by celebrating and enriching the treasury of the national cultural heritage, we lay grounds for a safe and sustainable future.

We are convinced that “The Armenian Musicians of the World”, along with “The Armenian Monuments of the World” four–volume publication, compiled owing to the cooperation between VivaCell–MTS and the Panarmenian Geographic Association, will become a guide on your way of exploring the Armenian cultural heritage.

Ralph Yirikian
VivaCell–MTS General Manager

Նախաբան

Հայերը տաղանդավոր ժողովուրդ են: Այս մասին բազմիցս են խոսել օտարազգի հանրահայտ մարդիկ՝ գրողներ, գիտնականներ, նկարիչներ, երաժիշտներ, և նշել հայերի նվաճումների մասին: Եվ իրոք, կարծես թե չկա մի բնագավառ, որտեղ հայ ազգի ներկայացուցիչները հաջողությունների հասած չլինեն: Հայերն աշխարհին տվել են նույնիսկ տիեզերագնաց ամերիկահայ Ջեյմս Բաղյանին:

Մերոնք իրենց դրսևորել են նաև երաժշտության ասպարեզում: Հանրահայտ հայ երաժիշտները, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր, ղեկավարում են նվագախմբեր, գլխավորում են խոշոր երաժշտական կոլեկտիվներ, հաղթում են մրցույթներում ու փառատոներում, նրանց ելույթների ժամանակ ամենահեղինակավոր համերգասրահները լեփ-լեցուն են: Նրանց ստեղծագործությունները կատարում են համաշխարհային աստղերը, իսկ համերգները ցուցադրվում են առաջատար հեռուստաալիքներով: Հենց նրանց էլ նվիրված է «Աշխարհի հայ երաժիշտները» գիրքը, որի առաջին մասում տեղ են գտել հոդվածներ Արամ խաչատրյանի, Շառլ Ազնավուրի, Միքայել Թարիվերդիևի, Սերժ Թանկյանի, Մարիա Գուլեգինայի, Հասմիկ Պապյանի, ինչպես նաև շատ ուրիշների մասին:

Այս գործում ևս շարունակում ենք պատմել հանրահայտ հայ երաժիշտների մասին: Իհարկե, երկու հատորում հնարավոր չէ ընդգրկել մեր բոլոր նշանավոր հայրենակիցներին, որոնք երաժշտության ոլորտում մեծ նվաճումների են հասել: Այդ իսկ պատճառով մենք փորձել ենք ներկայացնել նրանց՝ ըստ ժանրերի և աշխարհագրության, որպեսզի հասկանալի լինի

ընդգրկվածությունը: Այս հաստոցի առաջին մասում տեղ են գտել նյութեր հայ ակա- նավոր երաժիշտների՝ Կոմիտասի, Սա- յաթ-Նովայի, Առնո Բաբաջանյանի, ինչ- պես նաև աշուղներ Զիվանու և Հավասու մասին: Թեև Նրանց կյանքն ու գործունե- ությունը ծավալվել են նաև Հայաստանում, սակայն իրենց կյանքի զգալի մասն ապրել ու ստեղծագործել են արտերկրում: Երկ- ռորդ մասը նվիրված է տարբեր երկրնե- րում գործունեություն ծավալած հանրա- հայտ հայ երաժիշտներին, իսկ գիրքը եզրափակվում է աշխարհահռչակ \$րան- սահայ երաժիշտ Միշել Լեգրանին նվիր- ված նյութով:

Սա արդեն վեցերորդ գիրքն է արտերկրում հայերի գործունեության մասին: Առաջին չորս գիրքն աշխարհի հայկական հուշարձանների մասին էր, որտեղ ներկայացվել են մոտավորապես ութ հարյուր հուշարձան, որոնք տեղադրված են հայրենիքի սահմաններից դուրս: Հինգերորդ և վեցերորդ մասերը հայ երաժիշտների մասին են: Այս շարքը մեծ հետաքրքրություն առաջացրեց ինչպես Հայաստանում ու Սփյուռքում, այնպես էլ օտարերկրացիների շրջանում, որոնք անթաքույց հիացմունք էին արտահայտում՝ բացահայտելով այս ոլորտում հայերի գործունեության սահմանները:

Հայ երաժիշտների մասին այս յուրատեսակ հանրագիտարանի ստեղծումը հնարավոր դարձավ ԿիվանՍել-ՄՏՍ ընկերության և անձամբ ընկերության տնօրեն Ռաֆ Յիրիկյանի շնորհիվ, ինչի համար խորին շնորհակալություն ենք հայտնում, վստահ ենք նաև այս հրատարակության բազմաթիվ ընթերցողների անունից:

Preface

Armenians are a talented people. Renowned foreign writers, scientists, artists and musicians have recognized their achievements more than once and on numerous occasions. Indeed, it seems there is hardly any field Armenians have not succeeded in; further still, Armenians have even had an astronaut, the American Armenian James Bagian. Music is no exception. Now as before prominent Armenian musicians conduct orchestras and direct famous music bands; they score the highest in competitions and festivals. Their music performed by celebrated musicians and broadcasted on leading television channels, take place in the large stand the most famous music halls of the world at full houses. They feature in the book "Armenian Musicians of the World"; its first part includes names like Aram Khachaturian, Charles Aznavour, Mikhail Tariverdiev, Serj Tankian, Maria Guleghina, Hasmik Papian, and many others. This volume continues to introduce famous Armenian musicians. However, embracing all the distinguished musicians of Armenian descent in just two parts of the book was an insurmountable task; that is why we broke the contents by genre and by geography to make it more

comprehensible for the reader. The first part includes lives of outstanding Armenian musicians Komitas, Sayat-Nova, Arno Babajanian, as well as Jivani and Havasi:- two ashooghs, who lived and worked mostly abroad, yet spent significant part of their time in Armenia. The second part is devoted to those well-known Armenian musicians, who live and work beyond Armenia. The book is concluded with a major article about the world famous French Armenian musician Michel Legrand.

This is the sixth book in a row about Armenians living and working abroad. The first four books referred to the Armenian monuments of the world, including some 800 works located outside Armenia. These series have stirred major interest and an apparent excitement in Armenia, the Diaspora, and equally among foreigners, who discovered for themselves the extent of Armenian presence in this sphere.

On behalf of our team and, surely, the readers, we would like to express our deepest gratitude to VivaCell-MTS and personally the General Manager of the Company Ralph Yirikian for having brought this unique project to life.

Panarmenian Geographic Association
Yerevan, 2015

Համահայկական աշխարհագրական ասոցիացիա
Yerevan, 2015



1

4

8

2

7

3

5

8

6

- | | | |
|-----------|---|---------|
| ԱՄՆ | 1 | USA |
| Ավստրիա | 2 | Austria |
| Թուրքիա | 3 | Turkey |
| Լեհաստան | 4 | Poland |
| Լիբանան | 5 | Lebanon |
| Ռուսաստան | 6 | Russia |
| Սերբիա | 7 | Serbia |
| Ֆրանսիա | 8 | France |

ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅ
ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ
ARMENIAN MUSICIANS OF THE WORLD



separate the ...
 part of the ...
 the ...
 what ...

[Faint handwritten notes:]

H. H.
Lige & me
Unge munde
Freye - Freyde
Ged-e-Ge

your best services
yours truly
John F. Kennedy

Wang 48-2

June 29 45

tyne

Very true in 70

Printed by

Sp. fruct. - ...
- ...

التبريد

1271

1) *Pinus* - *Pinus* of 2 feet
 The *Pinus* *Pinus* *Pinus*
 The *Pinus* *Pinus* *Pinus* - *Pinus*
Pinus *Pinus* *Pinus* *Pinus*

Am 2. April 1848. In der
Mitte des Monats April
wurde die erste Sitzung
des Vereins gehalten. - Am
1. Mai 1848. In der
Mitte des Monats Mai
wurde die zweite Sitzung
gehalten.

Grün mefandeg - fongumt
Abfucht u.

Glücksgewinn
Gewinn - Gewinn -

Im freien, letzten
Einsatz mit - e der

174


[illegible]

Frucht, Frucht.

Ken-2 In-25

۱۴۰۳

6. 12. 1941



Yohannatur

Yohannatur (Soghomon Gevorg Soghomonian) was born on September 26 (October 8), 1869 in Anatolia, Turkey, in the town of Koutina (Ketaia). His father, Gevorg Soghomonian was a shoemaker but he also composed songs and had a beautiful voice. Being a carpet weaver, the composer's mother - Taguhi - was also singled out for her vivid musical abilities. Soghomon's childhood was full of deprivations. He lost his mother when he was less than one year old, and because his father was too busy his grandmother took care of him. At the age of seven Soghomon went to local elementary school, and after finishing it his father sent him to Bursa to continue his education. However, he failed his studies and four months later he came home having ultimately become an orphan: his father passed away, while Soghomon was only 11 years old... "He was a frail, weak, pale boy, always thoughtful and kind. He was dressed poorly," one of his classmates recalled about Komitas. Soghomon was often seen sleeping on the cold stones of the laundry room. He could sing perfectly, and no wonder he was called "a little vagrant singer" in Koutina. For his splendid voice Soghomonian was also indebted to an event that fundamentally changed the entire course of his life.

Komitas

Yohannatur (Soghomon Gevorg Soghomonian) was born on September 26 (October 8), 1869 in Anatolia, Turkey, in the town of Koutina (Ketaia). His father, Gevorg Soghomonian was a shoemaker but he also composed songs and had a beautiful voice. Being a carpet weaver, the composer's mother - Taguhi - was also singled out for her vivid musical abilities. Soghomon's childhood was full of deprivations. He lost his mother when he was less than one year old, and because his father was too busy his grandmother took care of him. At the age of seven Soghomon went to local elementary school, and after finishing it his father sent him to Bursa to continue his education. However, he failed his studies and four months later he came home having ultimately become an orphan: his father passed away, while Soghomon was only 11 years old... "He was a frail, weak, pale boy, always thoughtful and kind. He was dressed poorly," one of his classmates recalled about Komitas. Soghomon was often seen sleeping on the cold stones of the laundry room. He could sing perfectly, and no wonder he was called "a little vagrant singer" in Koutina. For his splendid voice Soghomonian was also indebted to an event that fundamentally changed the entire course of his life.



Իր հիանալի ծայնին էր Սողոմոնը պարտական այն իրա-
դարձությամբ, որը հիմնովին փոխեց նրա կյանքի ընթացքը:

1881 թ. Կուտինայի վանահայր Գ. Դերձակյանը պետք է մեկ-
ներ էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: Կաթողիկոսի խն-
դրանքով նա իր հետ մի ծայնեղ, որը տղա պետք է տաներ՝ էջ-
միածնի հոգևոր ճեմարանում ուսանելու: Քսան որք երեխա-
ներից ընտրվում է տասներկուամյա Սողոմոնը: Քանի որ այդ
ժամանակ Կուտինայում հայերեն խոսելն արգելված էր, տղան
թուրքախոս էր, և Գևորգ Դ կաթողիկոսի ողջունին պատաս-
խանեց. «Ես հայերեն չեմ խոսում, եթե ուզում եք՝ կերգեմ»: Եվ
իր գեղեցիկ ծայնով երգում է հայերեն շարական՝ առանց որևէ
բառ հասկանալու: Բացառիկ ընդունակությունների շնորհիվ
տղան կարճ ժամանակում հաղթահարում է բոլոր խոչըն-
դոտները, կատարելապես տիրապետում հայերենին:

1890 թ. Սողոմոնը ձեռնադրվում է սարկավագ: 1893 թ. ավար-
տում է ճեմարանը, նրան շնորհվում է աբեղայի աստիճան և
տրվում 7-րդ դարի Նշանավոր բանաստեղծ, շարականների
հեղինակ Կոմիտաս կաթողիկոսի անունը: Ճեմարանում
Կոմիտասը Նշանակվում է երաժշտության ուսուցիչ:


Մանկավարժությանը զուգընթաց Կոմիտասն ստեղծում է
երգչախումբ, ժողովրդական գործիքների նվագախումբ,

In 1881 the priest of Koutina, G. Dertsakyan, had to leave for
Echmiadzin to be ordained a bishop. At the request of the
Catholicos he had to bring a gifted orphan boy with him to study
at the Echmiadzin Seminary. Twelve-year old Soghomon was
selected out of twenty orphans to study at the Seminary. As it
was forbidden to speak Armenian at that period the boy spoke
Turkish and when being greeted by the Catholicos Gevorg IV, he
replied, "I don't speak Armenian, if you wish I will sing."

Then with his fine voice he sang an Armenian sharakan (hymn)
without understanding a single word. Due to his exclusive
aptitude the boy overcame all the obstacles in a very short
time and mastered the Armenian language.

In 1890 Soghomon was ordained a hiermonk.
After graduating the Seminary in 1893 and following his
ordination as "vardapet" (celibate priest) he was given the
name of the 7th-century outstanding poet and musician
Catholicos Komitas.

At the Seminary Komitas was assigned a music teacher.
Along with teaching, Komitas assembled a choir, an orchestra
of folk instruments, transcribed folk songs, and first researched
into the field of Armenian Church music.



մշակում ժողովրդական երգեր, գրում իր առաջին ուսումնասիրությունները հայ եկեղեցական երաժշտության մասին:

1895 թ. Կոմիտասին շնորհվում է վարդապետի հոգևոր աստիճան: Նույն թվականի աշնանը Նա մեկնում է Թիֆլիս՝ երաժշտական ուսումնարանում սովորելու: Սակայն համադիպելով Պետերբուրգի կոնսերվատորիայում կրթություն ստացած կոմպոզիտոր Մակար Եկմալյանին՝ փոխում է իր մտադրությունը և վերջինիս մոտ կարճ ժամանակով (5 ամիս) ուսումնասիրում ու յուրացնում հարմոնիայի դասընթացը: Այս պարապմունքները եվրոպական երաժշտական տեխնիկային տիրապետելու յուրատեսակ նախերգանք դարձան նրա համար:

Կոմիտասի կյանքի հետագա իրադարձությունները կապված են եվրոպայի խոշոր երաժշտական կենտրոնի Բեռլինի հետ, որտեղ Նա մեկնեց ուսանելու կաթողիկոսի բարեխոսությամբ՝ թոշակ ստանալով հայ խոշոր նավթարդյունաբերող Ալեքսանդր Մանթաշյանից: Կոմիտասն ընդունվում է պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիան: Վերջինիս պարապմունքներին զուգընթաց կոմպոզիտորը հաճախում է Բեռլինի Կայսերական համալսարանի փիլիսոփայության, գեղագիտության, ընդհանուր և երաժշտության պատմության դասախոսություններին: Ուսումնառության տարիներին Կոմիտասը հնարավորություն է ստանում «շփվելու» եվրոպական երաժշտության հետ՝ ավելի հարստացնելով գիտելիքների իր պաշարը, զբաղվում է երաժշտաքննադատական գործունեությամբ: Բեռլինի միջազգային երաժշտական ընկերության հրավերով Նա դասախոսություններ է կարդում հայ եկեղեցական և աշխարհիկ երաժշտության մասին՝ այն համեմատելով թուրքական, արաբական, քրդական երաժշտության հետ՝ միևնույն ժամանակ ընդգծելով հայ երաժշտության ինքնության փաստը:

1899 թ. սեպտեմբերին Կոմիտասը վերադառնում է Էջմիածին և շարունակում գիտական, ստեղծագործական գործունեությունը և մանկավարժական աշխատանքը: Կարճ ժա-

In 1895 Komitas was ordained an archimandrite. In the autumn of the same year he left for Tiflis to study at the musical college. However, when he met the composer Makar Yekmalyan, a graduate of St. Petersburg Conservatory, he changed his mind and took up a five-month course on harmony with the composer. These studies laid the groundwork for understanding of European musical heritage.

The further events of Komitas' life were linked with the large music center in Europe – Berlin – where he went to study at the request of the Catholicos, and was financed by the wealthy Armenian oil explorer Alexander Mantashyan.

Komitas studied music at the private conservatory of Professor Richard Schmidt. Simultaneously with these classes, he also attended the lectures on Philosophy, Esthetics, General History and History of Music. During these academic years he had an opportunity to “communicate” with European music, enriching the supply of knowledge and engaging in musical criticism.

Upon the invitation of the Berlin chapter of the International Musical Society he held lectures devoted to the Armenian Church and contemporary music in comparison with Turkish, Arabic and Kurdish music, at same time highlighting the fact of the Armenian identity in music.

In September 1899 Komitas returned to Echmiadzin and started his musical activity. In a short period he completely changed the system of teaching music in the seminary, organized a small orchestra and raised the performance level of the choir. He visited various regions of Armenia compiling and putting down thousands of Armenian peasant songs.

He started serious scientific research, studied Armenian folk and church melodies and worked on the decipherment of Armenian “khaz” (Armenian music notation system) and on the theory of sonant voices. In various countries of the world Komitas appeared as a performer and promoter of Armenian music.





մանակում Կոմիտասն արմատականորեն փոխում է երաժշտության ուսուցման դրվածքը ճեմարանում, ստեղծում ոչ մեծ նվագախումբ, բարձր վարպետության հասցնում երգչախմբի կատարողական հնարավորությունները:

Նա շրջում է Հայաստանի շատ վայրերում՝ գրի առնելով և ուսում-նասիրելով հազարավոր հայկական գեղջկական երգեր: Նա ուսում-նասիրում է հայ ժողովրդական և հոգևոր մեղեդիները, աշխատում հայկական խազերի վերծանման, ծայնեղանակների տեսության վրա: Կոմիտասն աշխարհի տարբեր երկրներում հանդես է գալիս որպես հայ երաժշտության կատարող և քարոզիչ: Կոմպոզիտորն սկսում է խորհել նաև երաժշտական խոշոր, մոնումենտալ ձևերի մասին: Մտադրվում է «Սասնա ծռեր» էպոսի հիման վրա ստեղծել երաժշտական դրամա և շարունակել իր աշխատանքը «Անուշ» օպերայի վրա, որը սկսել էր 1904-ից: Նա իր ուշադրությունը բևեռում է ժողովրդական երաժշտական ստեղծագործության հետ կապված թեմաների վրա, բացահայտում է ժողովրդական երգերի բովանդակային առանձնահատկությունները: Իհարկե, կոմպոզիտորի աշխարհայացքի նմանօրինակ հիմքերը պետք է հանգեցնեին եկեղեցու և Կոմիտասի միջև հակասության: Խրիմյան Հայրիկի վախճանից հետո (1908 թ.) եկեղեցու նոր ղեկավարների սառնասրտությունը, վանական միաբանության հետադեմ խավի թշնամական վերաբերմունքը, բամբասանքներն ու գրպարտանքն ավելի են մեծանում և թունավորում կոմպոզիտորի կյանքը: Մի մարդու, որը ժամանակակիցների հիշողության մեջ մնացել է որպես աշխարհիկ անձնավորություն:

Կոնֆլիկտն այնքան է խորանում, որ Կոմիտասը մի աղերսագին գրավոր դիմում է հղում կաթողիկոսին՝ խնդրելով իրեն ազատ արձակել, թույլ տալ հանգիստ ապրել և ստեղծագործել: Այս դիմումն անհետևանք է մնում, և սկսվում է ավելի անթաքույց հալածանք Կոմիտասի նկատմամբ:

1910 թ. Կոմիտասը թողնում է էջմիածինը ու մեկնում Կոստանդնուպոլիս: Նա կարծում էր, թե Պոլսում կարող էր գտնել այնպիսի միջավայր, որտեղ կկարողանար իրականացնել իր իղձերը, որտեղ կհասկանային, կպաշտպանեին իրեն և կխրախուսեին իր գործունեությունը: Կոմիտասը ցանկանում էր ստեղծել ազգային երաժշտանոց, որի հետ էր կապում հարազատ ժողովրդի երաժշտության հետագա զարգացումը: Սակայն կոմպոզիտորին չի հաջողվում այս, ինչպես և շատ այլ ձեռնարկումներ իրագործել: Նրա բոլոր նվիրական մտահոգումները հանդիպում են տիրող իշխանությունների անտարբերությանն ու խորտակվում: Պոլսում Կոմիտասը կազմակերպում է երեք հարյուր հոգանոց խառը երգչախումբ՝ անվանելով այն «Գուսան»: Վերջինս մեծ ժողովրդականություն է վայելում բնակչության լայն շրջաններում: Նրա համերգային ծրագրերում տեղ էին գտնում հայ ժողովրդական և հոգևոր երգեր:

Կոմիտասը հաճախ իր ժամանակն անցկացնում էր ուղևորությունների մեջ՝ հանդես գալով զեկուցումներով ու դասախոսություններով, իր կազմակերպած համերգներում ելույթ ունենալով որպես մեներգիչ ու խմբավար: Կոմպոզիտորը հիանալիորեն տիրապետում էր սրինգին և դաշնամուրին: Նա օժտված էր իր ունկնդիրներին հուզելու և համոզելու մեծ ուժով: Կոմիտասի արվեստը հիացրել էր հռչակավոր երաժիշտներ Վենսան դ'Էնդիին, Գաբրիել Ֆորեին, Քամիլ Սեն-Սանսին...

The composer began thinking over huge, monumental musical forms. He intended to create the musical drama based on the epos Sasna tsrer; he continued adapting the opera “Anush,” which he started back in 1904.

Komitas focused on the themes concerning folk music and revealed the content of folk songs. No doubt, such world outlook had to result in an inescapable conflict between Komitas and the Church. After Khrimyan Hayrik’s death in 1908, Komitas, remembered as a “secular man” among his contemporaries, was not accepted by the Church and the indifference of new leaders, negative attitude of the backward group of the church figures, gossip and slander made his life so unbearable that he sent a letter to the Catholicos begging to release him and let him create and live quietly. However, this request remained unanswered, and the persecution of Komitas became more obvious.

In 1910 Komitas left Etchmiadzin for Constantinople. There he expected to find an environment that would understand and protect him, and encourage his activity, and here he would be able to fulfill his intentions. Komitas wanted to establish a National Conservatory, in which he could see the further destiny of Armenian music. But the composer failed to accomplish this plan. His inspired ideas were only faced with the cold indifference of the local authorities. In Constantinople, Komitas organized a mixed choir of 300 and called it the Gousan. The choir, gaining wide popularity among communities, performed Armenian folk and spiritual compositions.

Komitas would often spend his time touring, giving presentations and lectures; he also acted as a soloist and conductor. He wonderfully mastered the flute and the piano. He was endowed with great power to influence his audience. The well-known musicians: Vincent D’Andy, Gabriel Fauré, Camille Saint-Saëns... admired Komitas for his creative work.

In 1906 after one of the concerts the outstanding French composer Claude Debussy exclaimed excitedly, “Father Komitas! I bow before your musical genius!”

In Constantinople Komitas could not find any like-minded people who would help him implement his plans. Moreover, while in Echmiadzin he was surrounded with his native people and close to its lifestyle and art, in Constantinople he was deprived of it. Nevertheless, he continued to work hard. Komitas paid a special attention to the composition of spiritual music. His masterpiece in this field is Patarag (Liturgy) written for the male chorus.

Musicology was also an important field for him. In Paris at the Conference of the International Music Society he gave two reports: “Armenian Folk Music” and “On Old and New Notation of Armenian Spiritual Music.” These provoked great interest among the participants of the conference. Komitas was also requested to give a spontaneous presentation on the topic: “On Time, Place, Accentuation and Rhythm of Armenian Music.”

In the period of World War I the government of Young Turks initiated their monstrous program on violent and inhumane extermination of part of the Armenian people. In April 1915, Komitas was arrested along with the number of outstanding Armenian writers, publicists, physicians, and lawyers. After the arrest, accompanied by violence, he was deported far in Anatolia where he had witnessed the extermination of the nation. Though Komitas was dispatched back to Constantinople due to the intervention of influential



1906 թ. մի համերգից հետո ֆրանսիացի նշանավոր կոմպոզիտոր Կլոդ Դեբյուսին հուզված բացականչում է. «Չանճարեղ հայր Կոմիտաս, զեր երաժշտական հանճարի առջև խոնարհվում եմ»: Պոլսում նույնպես Կոմիտասը չգտավ անշահախնդիր համախոհներ, որոնք կօգնեին իր ծրագրերն իրագործելու: Դեռ ավելին, եթե էջմիածնում Նա իր հարազատ ժողովրդի հետ էր, միտ էր Նրա կենցաղին ու արվեստին, Պոլսում գրկված էր Նաև դրանից: Այդուհանդերձ, Նա շարունակում է իր լարված աշխատանքը: Կոմիտասն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հոգևոր գործերի ստեղծմանը: Այս բնագավառում Նրա գլուխգործոցը «Պատարագն» է՝ գրված արական երգչախմբի համար:

Կոմպոզիտորը կարևոր նշանակություն էր տալիս Նաև երաժշտագիտական գործունեությանը: Փարիզում Միջազգային երաժշտական ընկերության համաժողովում Նա կարդում է երկու զեկուցում՝ «Չայ ժողովրդական երաժշտություն» և «Չայ հոգևոր երաժշտության մեջ հին և Նոր նոտագրության մասին» թեմաներով, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում համաժողովի մասնակիցների շրջանում:

Կոմիտասին առաջարկում են կարդալ Նաև չնախատեսված զեկուցում՝ «Չայ երաժշտության ժամանակի, կշռի, շեշտավորության և տաղաչափության մասին» թեմայով:

figures, the nightmare he had experienced affected his soul. Komitas remained in seclusion from the outer world, absorbed in his gloomy and heavy thoughts – sad and broken.

In 1916 Komitas' health deteriorated and he was put in a psychiatric hospital. However, there was no hope of recovery. The medicine was powerless against the disease.

The genius of Armenian music found his final shelter in Paris, in a psychiatric clinic in the suburbs of Villejuif having stayed there for almost 20 years.

On October 22, 1935, the Great Komitas died. In the spring of 1936 his remains were transported to Armenia and buried in Yerevan – in the Pantheon of prominent art figures. Even more tragic was the destiny of Komitas' works. The majority of his manuscripts were destroyed or lost all over the world...

“The Armenian nation found and recognized its soul, its spiritual nature within Komitas's songs. Komitas Vardapet is a beginning having no end. He will live through the Armenian people, and they must live through him, now and forever.” (Vazgen I, the Catholicos of all Armenians)

Both in Armenia and abroad monuments are erected to Komitas' memory, many cultural centers music bands are named in honor of the great musicologist, one of the main avenues in Yerevan carries his name.

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարությունը սկսում է իրագործել հայ ժողովրդի մի հատվածի դաժան և անմարդկային բնաջնջման իր հրեշավոր ծրագիրը: 1915 թ. ապրիլին մի շարք նշանավոր հայ գրողների, հրապարակախոսների, բժիշկների, իրավաբանների հետ մեկտեղ ձերբակալվում է Նաև Կոմիտասը: Խոշտանգումներով ուղեկցվող բանտարկությունից հետո Նա աքսորվում է Անատոլիայի խորքերը՝ ականատես դառնալով հայ ժողովրդի բնաջնջմանը: Ու թեև ազդեցիկ անձանց միջնորդությամբ Կոմիտասը վերադարձավ Պոլիս, վերապրած սարսափներն անջնջելի հետք թողեցին Նրա հոգեկան աշխարհի վրա: Կոմիտասն առանձնացավ արտաքին աշխարհից, փակվեց միայն իր մռայլ ու ծանր խոհերի մեջ, ընկճված և մելամաղձոտ: 1916 թ. կոմպոզիտորի առողջական վիճակն է՛լ ավելի է վատթարանում, և Նրան տեղափոխում են հոգեբուժարան: Սակայն ապաքինման ոչ մի հույս չկար: Բժշկությունն անգոր էր փոխելու հիվանդության ընթացքը:

Չայ երաժշտության հանճարն իր վերջին ապաստանը գտնում է Փարիզի Վիլ-ժուիֆ արվարձանի հիվանդանոցում՝ անցկացնելով այնտեղ գրեթե քսան տարի:

1935 թ. հոկտեմբերի 22-ին ընդհատվում է մեծն Կոմիտասի կյանքը:

1936 թ. գարնանը Նրա աճյունը տեղափոխվեց Չայաստան և հողին հանձնվեց Երևանում՝ Մշակույթի գործիչների պանթեոնում:

Ոչ պակաս ողբերգական ճակատագիր ունեցավ Նաև Կոմիտասի հսկայական ժառանգությունը: Նրա ձեռագրերից շատերը ոչնչացան կամ ցրվեցին աշխարհով մեկ...

«Չայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը: Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի Նրանով, ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան» (Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա.):

Չայաստանում, ինպես Նաև երկրի սահմաններից դուրս տեղադրվել են Կոմիտասի հիշատակին նվիրված բազմաթիվ հուշարձաններ, մշակույթի տներ ու երաժշտական կոլեկտիվներ են անվանվել ի պատիվ մեծ երաժշտի: Երևանի գլխավոր պողոտաներից մեկը նույնպես կրում է Նրա անունը:



Իսկ 2015 թ. հունվարի 29-ին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում, մայրաքաղաքի Կոմիտասի անվան զբոսայգում տեղի ունեցավ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի բացումը, որի կառուցման որոշումը կայացվել էր 2013 թ. մայիսի 30-ին Հայաստան համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում՝ 22 նախագահի առաջարկի հիման վրա: Թանգարանի նախագծի հեղինակն ու ճարտարապետն է Արթուր Մեսչյանը: Թանգարան-ինստիտուտը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով: Ունի համերգասրահ, մշտական ցուցադրություն և ժամանակավոր ցուցահանդեսների հնարավորություն: Կառույցի շրջանակում կգործեն գիտահետազոտական կենտրոնը, երաժշտական ստուդիան, գրադարանը, հրատարակչությունը: Թանգարան-ինստիտուտը կնպաստի Կոմիտասագիտության զարգացմանը, մեծ երաժշտի ստեղծագործական ժառանգության հետազոտմանը և հանրահռչակմանը:

On the January 29 2015 in the frames of the events for the commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide, took place the opening of the Komitas Museum-Institute at the Komitas Park. Under the President's proposal, the resolution to build the museum was passed by the Board of Trustees of Hayastan All Armenian Fund on May 30, 2013.

The architect of the museum is Arthur Meschyan. The Museum is equipped with modern technologies-Concert Hall, the possibility of permanent and temporary exhibitions. The complex houses a research center, a music studio, a library and a publishing house. The museum will contribute to the development of Komitas studies, research and popularization of the composer's creative heritage.





Chengzhang Han



Սայաթ-Նովա

Սայաթ-Նովայի (Հարություն (Արուսիկ) Սայադյան) մայրը՝ Սառան, ծնվել է Թիֆլիսում, իսկ հոր՝ Կարապետի ծննդավայրը համարվում է Ադանան կամ Հալեպը: Արուսիկը ծնվել է 1722 թ. Թիֆլիսում: Տղան գրաճանաչ է դարձել հոր օգնությամբ, այնուհետև սովորել է Թիֆլիսի հայկական դպրոցներից մեկում, հետագայում գիտելիքները խորացրել ինքնակրթությամբ:

Ենթադրվում է, որ 15 տարեկանում Նրան գերեվարել են. շուրջ 4 տարի դեգերել է Արևելքի երկրներում, որպես երգիչ-նվագաժու մասնակցել Նադիր շահի Հնդկական արշավանքին (1738-39 թթ.), ապա Նրան փրկագնել է վրաց արքայազն Հերակլը և դարձրել պալատական աշուղ: Այստեղ էլ Նա սկսել է ստեղծագործել Սայաթ-Նովա (երգի որսորդ) աշուղական անունով: Նա գրել է բանաստեղծություններ, երգել, նվագել է քամանչա, չունգուր և թամբուր: Սայաթ-Նովան ծառայել է պալատում, բայց ողջ ռաջամբ նվիրված է եղել հասարակ ժողովրդին. իրեն անվանել է «խալխի Նոբար»:

Դժվար է լինում Սայաթ Նովայի կյանքը արթունքում. իր դիրքը կորցնում է այն բանից հետո, երբ սիրահարվում է թագավորի քրոջը, Նրան վտարում են արթունքից, դրանից հետո ստիպված է լինում ողջ կյանքն անցկացնել որպես շրջիկ աշուղ:

1752-ին Վրաստանից աքսորվելուց հետո, Հերակլ արքան Նրան բռնի ուժով դարձնում է քահանա: Քահանա Տեր-Ստեփանոս ձեռնադրված Սայաթ-Նովան ամուսնացել է լոռեցի Մարմարի հետ և ունեցել 4 զավակ:

Նա հոգևոր հովիվ է եղել Նաև Պարսկաստանի Գիլան Նահանգի Էնզելի քաղաքում: 1768 թ. կնոջ մահից հետո

Sayat-Nova

Sayat Nova's / Arutiun Sayatyan/ mother, Sara, was born in Tbilisi and his father, Karapet, either in Aleppo or Adana. He was born in Tbilisi. In 1722 the father helped him become literate; later he studied in one of Tiflis' local schools, after which he got skilled by himself. He is said to be captured at the age of 15, wandering as a minstrel in the East for four years; to have participated in Nadir Shah's invasion of India (1738-39). Later he was bailed out by Georgian Prince Heraclius, becoming a courtier troubadour. Here he started composing and adopted the ashik name Sayat Nova (Song hunter). He was skilled in writing poetry, singing, and playing the kamancha, chonguri, and tambur.

Despite his service in the court he called himself "a servant of the people."

He lost his position at the royal court after having fallen in love with the king's sister; after being banished from the court he had to spend the rest of his life as an itinerant bard. In 1752 King Heraclius, after expelling him from Georgia, forced him to become a priest. Sayat Nova who was then ordinate priest Stepanos, got married to Marmar from Lori, and they had four children. He was a pastor in Gilan province of the Iranian city Anzali.

After his wife's death in 1768, he served as a monastic priest in various locations including St. George church of Tiflis (Tbilisi) and Haghpate Monastery.

It is believed that Sayat Nova was martyred in 1795, when the Persian Agha Mohammad Khan invaded Tbilisi.

Sayat Nova is considered a great poet who made a





Սայաթ-Նովան՝ որպես կուսակրոն քահանա, ծառայել է Չաղպատի վանքում և Թիֆլիսի Սբ Գևորգ եկեղեցում:

Ենթադրվում է, որ Սայաթ-Նովան նահատակվել է 1795 թ., երբ պարսից Աղա Մահմադ խանը ներխուժել է Թիֆլիս:


Սայաթ-Նովան մեծ բանաստեղծ է և երաժիշտ-կատարող. նրա արվեստը նշանակալի ներդրում է ունեցել և՛ հայ պոեզիայի, և՛ Անդրկովկասի աշուղական արվեստի զարգացման գործում: Նրա գործերում հիմնականում իշխում են աշխարհիկ տարրերը, որոնք լի են ռոմանտիկ արտահայտչամիջոցներով: Սայաթ-Նովային են վերագրվել ավելի քան 220 երգեր, թեև դրանց թիվն իրականում կարող է անցնել ևս մի քանի հարյուրի սահմանը:

Հովհաննես Թումանյանի և Նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ջանքերով 1913 թ. տոնվել է աշուղի ծննդյան 200-ամյակը: Մեկ տարի անց հրատարակվել է հայերեն խաղերի ամբողջական՝ «Սայաթ-Նովա» ժողովածուն: Հովհաննես Թումանյանի Նախաճեռ-նությամբ Նույն թվականին Թիֆլիսի Սբ Գևորգ եկեղեցու բակում բացվել է Սայաթ-Նովայի հուշաքարը:

Սայաթ-Նովայի երգերը թարգմանվել են մի շարք լեզուներով, նրա մասին գրվել են գրական, երաժշտական ստեղծագործություններ, գիտական աշխատություններ, ինչպես նաև նրան անդրադարձել են թատրոնում, կինոյում և կերպարվեստում:

Սայաթ-Նովայի անունով 22 տարբեր քաղաքներում կոչվել են փողոցներ, դպրոցներ, երաժշտական խմբեր:

Հայաստանում ու Վրաստանում մեծ շուքով նշվել է նաև աշուղի 300-ամյա հոբելյանը:



considerable contribution to the Armenian poetry and music of his century. Although he lived his entire life in a deeply religious society, his works are mostly secular and full of romantic expressionism. About 220 songs have been attributed to Sayat Nova, although he may have written hundreds more.

Due to Hovhannes Tumanyan's and the artist Gevorg Bashinjaghyan's efforts, in 1913, the 200th anniversary of the bard was celebrated. A year later a complete collection of Sayat Nova Armenian songs was published. In 1914 Hovhannes Tumanyan initiated the opening of Sayat-Nova's memorial in the St. George church yard in Tbilisi.

His songs have been translated into several languages, many literary, musical and scientific works have been written about Sayat Nova; his image was reflected in theater, film and fine arts.

Many streets, schools, musical bands in RA cities have been named after Sayat Nova. The 300th anniversary of the bard was celebrated with grandeur both in Armenia and Georgia.



«Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը ստեղծել է մեծանուն երգիչ Շարա Տալյանը 1927 թ.: 1942–1972 թվականներին անսամբլը ղեկավարել է 22 ժողովրդական արտիստ Վաղարշակ Սահակյանը: 1972-ին անսամբլը դադարել է գոյություն ունենալ: 20 տարի անց՝ 1992թ. Թովմաս Պողոսյանը, իր շուրջը համախմբելով մի խումբ արհեստավարժ երգիչների և երաժիշտների, վերստեղծեց անսամբլը, որն առ այսօր գործում և վայելում է մեր ժողովրդի սերն ու համակրանքը՝ ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում:

Անսամբլի երգացանկն ընդգրկում է ինչպես անցյալի, այնպես էլ ներկայումս ստեղծագործող աշուղների շուրջ 400 և ավելի երգեր: Սայաթ-Նովա ան-սամբլը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Հայաստանի և սփյուռքի տարբեր բնակավայրերում՝ Ռուսաստան, Վրաստան, Իրան, Սիրիա, ԱՄՆ և այլուր:

The “Sayat–Nova” State Minstrel Song Ensemble was established in 1927 by the famous singer and musician Shara Talian. Since 1942 the Ensemble was directed by Armenia’s People’s Performer Vagharshak Sahakian. In 1972 the Ensemble ceased its activities. In 1992, 20 years later, Tovmas Poghosian, bringing together a group of professional singers and musicians, reestablished the Ensemble which still performs today enjoying the admiration and support of the Armenians in the Motherland and the Diaspora alike. The repertoire of the Ensemble consists of more than 400 songs of the minstrels from the past and the present. The “Sayat–Nova” Ensemble has performed numerous concerts throughout Armenia and the Diaspora–Russia, Georgia, Iran, Great Britain, United States, etc.





Զիվանի

Զիվանին (Սերոբ Ստեփանի Լևոնյան) ծնվել է 1846 թ. Ախալքալաք գավառի Կարծախ գյուղում։ Դառն են եղել տղայի մանկության և պատանեկության տարիները։ Փոքր տարիքում կորցնում է հորը, իսկ մայրն ամուսնանում է երկրորդ անգամ և հեռանում գյուղից։ Սերոբը և Նրա երկու եղբայրները՝ Զերոբն ու Փիլիպոսը, զրկվում են մայրական խնամքից ու զուրգուրանքից։ Սորից բաժանվելու վիշտն ընդմիշտ մնում է Սերոբի սրտում։ Նրա հորեղբայրը՝ Մարտիրոսը, որը Կարծախում ճանաչված մարդ էր, իր վրա է վերցնում երեք որբերի խնամքն ու դաստիարակությունը։ Ժամանակներն ու պայմանները թույլ չեն տալիս, որպեսզի Սերոբը կարողանա սիստեմատիկ կրթություն ստանալ։ Գյուղական խալիֆայական դպրոցում Նոր էր գրել–կարդալ սովորել, երբ հորեղբայրը Նրան դպրոցից դուրս է բերում և կարգում հորթարած։ Բնածին տաղանդի տեր պատանին ընկերների հետ հորթերն արոտ տանելիս շարունակ երգում էր հորեղբորից և ուրիշներից լսած, իսկ այնուհետև իր հորինած երգերը։ Զիվանին՝ որպես աշուղ, կայանում է Նախ Թիֆլիսի, ապա Գյումրիի երաժշտական միջավայրում։ Մինչև 1880–ական թթ. Նրա երգերը տպագրվել են տարբեր պարբերականներում և «Սոխակ Չայաստանի» երգարանի հատորներում։ Աշուղական արվեստը Սերոբը սովորում է կարծախցի Նշանավոր աշուղ Սիայու մոտ։ Երկու տարվա ընթացքում պատանին այնպես է առաջագիմում, որ Նույնիսկ դառնում է իր վարպետի մրցակիցը։ Վարպետը հայրաբար օրհնում է իր սանին և անունը դնում Զիվանի։ Նեղ է լինում գյուղական աշխարհը աշուղի համար, և Նա լայն ասպարեզ է որոնում և որոշում է հեռանալ գյուղից։ 1864 թ. մի առիթով Զիվանին հորեղբոր՝ Մարտիրոսի հետ մեկնում է Թիֆլիս, իսկ այնուհետև՝ Ալեքսանդրապոլ։ Կարապետ և Չովհաննես Տալանների սրճարանում Զիվանին ելույթ է ունենում և մեծ հաջողության հասնում։ Նրա համբավը արագությամբ տարածվում է քաղաքում և ապա՝ ողջ Շիրակում։ Բնակավայրն իր հարուստ բանահյուսությամբ, պատմական հուշարձաններով գրավում է երգչին։ Նրա վրա մեծ ազդեցություն են գործում Ալեքսանդրապոլի Նշանավոր աշուղները։ 1872 թ. Զիվանին ամուսնանում է սրճարանատեր Չովհաննես Տալանի աղջկա՝ Աշխենի հետ։ Նրանք ունենում են վեց երեխա՝ երկու աղջիկ՝ Արաբայա և Չոփսիմե, 4 որդի՝ Գարեգին, Գուրգեն, Պարոյր և Լևոն։ Որդիները բոլորն էլ եղել են Նշանավոր մարդիկ, օրինակ՝ Գարեգինը ՉԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ էր, գրականագետ, արվեստաբան, պրոֆեսոր։ Ներկայում աշուղի մեկ տամայակից ավելի թոռներ ու ծոռներ ապրում են Թբիլիսիում, Երևանում և Մոսկվայում։ Զիվանին իր խմբով շրջագայել է Չյուսիսային Կովկասի, Դրիմի, Ուկրաինայի, Ռուսաստանի և այլ հայաբնակ վայրերում։ 1895 թ. աշուղն ընտանիքով ընդմիշտ տեղափոխվում է Թիֆլիս։ Զիվանին՝ որպես փիլիսոփա–աշուղ, բարոյագետ, մեծ ազդեցություն է թողել հայ աշուղական դպրոցի զարգացման վրա։ Նա հայ Նոր աշուղական դպրոցի հիմնադիրներից է և աշուղական արվեստը բարձրացրել է մի Նոր աստիճանի։ Մեզ է հասել Զիվանու շուրջ 800 երգ, որոնք հեղինակից գրառել և մշակել են Ք. Կարա–Մուրզան, Մ. Եկմալյանը, Կոմիտասը, Ա. Բրուստյանը և ուրիշներ։ Զիվանին բարերար ազդեցություն է գործել հայ աշուղական հետագա սերունդների վրա։ Երևանում Զիվանու անունով կոչվել է փողոց և երաժշտական դպրոց։ Զավախքի Ախալքալաք քաղաքում տեղադրվել է աշուղի բազալտե արձանը։

Աշուղի անվան հետ են կապված «Աշուղ Դարիբ», «Ասլի Զյարամ», ինչպես Նաև արևելյան այլ սիրավեպեր։ Նրա ստեղծագործություններն առանձին գրքերով լույս են տեսել 1882, 1912 թթ.։ Մեր օրերում լույս են տեսել տպագրված և անտիպ երգերի մի քանի ժողովածուներ։ 1909 թ. աշնանը Զիվանին ծանր հիվանդանում է և ընկնում անկողին. հիվանդությունը տևում է հինգ ամիս։ Նույն թվականի մարտի 5–ին մեծ աշուղը մահանում է։

Jivani

Jivani (Serob Stepan Levonian) was born in 1846 in Kartsakh village of Akhalkalaki province. His years of childhood were bitter. His father died when he was young, and his mother got married in the neighboring Dadash village. Serob and his two brothers, Kerob and Pillibos, stayed without mother care and tenderness. The sorrow of separation from his mother forever remained in Serob's heart. His uncle Martiros, who was a famous person in Kartsakh, took care of the three orphans. The life conditions and the period did not allow Serob to obtain comprehensive education. Hardly had he learnt reading and writing in a local school when his uncle took him out of it and assigned to be a cattleman. On his way to the mountains the gifted young Serob was always singing songs heard from his uncle and others, later creating his own ones. Jivani established himself as an ashik in the musical atmosphere of Tbilisi and that of Gyumri. Until the 1880s his songs were published in different periodicals and in the volumes of the musical collection named “Nightingale of Armenia.”

Jivani learned the ashik art with the support of the notable ashough Siayi at Kartsakh village and within two years he became successful enough to compete with his master. The latter blessed his talented student and named him Jivani. He wanted to leave the village for the city to look for a bigger audience and implement his ideas. In 1864, on one occasion Jivani went to Tbilisi with his uncle Martiros, and then visited Alexandropol (Gyumri). In the café of Karapet and Hovhannes Talyan, Jivani's performance had a great success and his fame quickly spread in the city and later in the whole region of Shirak. The region attracted the singer with its unique folk lore and historical monuments. He was greatly influenced by notable ashoughs of Alexandropol. In 1872 Jivani got married to Ashkhen – the daughter of the café owner Hovhannes Talyan. They had 6 children, two daughters – Araksya and Hripsimeh, and sons – Garegin, Gurgen, Paruyr and Levon. His sons became recognized as well: Garegin was Honoured Art Worker of Soviet Armenia, a literary critic and artist, professor. Now more than a dozen of Jivani's grandchildren and great–grandchildren live in Tbilisi, Yerevan and Moscow. Jivani with his group toured the Armenian communities of Northern Caucasus, the Crimea, Ukraine, Russia and other places. In 1895 Jivani permanently settled in Tbilisi with his family.

As a publicist, philosopher and moralist, Jivani has left a great impact on the development of Armenian school of ashik art. He was one of the founders of the new Armenian troubadour school. About 800 songs written by Jivani have reached us. Jivanis songs were copied from the author and interpreted by Kara–Murza, M. Yekmalyan, Komitas, A. Brutyan and others. He brought up the ashik art to a new level leaving a salutary impact on future generations of bards. There is a street named after Jivani in Yerevan. In Akhalkalaki city of Javakha a basalt statue of the gusan is erected.

His name is linked with “Ashik Gharib,” “Asli Kyaram,” and other eastern romance poems. His works were published in separate books in 1882 and 1912. In our days several printed and earlier undisclosed compilations of his songs have been published. In the fall of 1909, Jivani got seriously ill and was confined to bed for five months. The same year the great singer died on March 5.



Հավասի

Հավասին (Արմենակ Պարսամի Մարկոսյան) ծնվել է 1896 թ. Ծավկայի շրջանի Այազմա գյուղում: Երեք տարեկանում հիվանդության պատճառով Արմենակը զրկվում է տեսողությունից: Որդուն բուժելու ծնողների գործադրած ջանքերն ապարդյուն են անցնում... Երեխան ընդմիշտ կորցնում է տեսողությունը: Արմենակի ծանր վիճակը շատ է մտատանջում ծնողներին, նրանք երեխայի համար ելք են որոնում: Հայրը գյուղում հայտնի երգասաց էր և հեքիաթներ պատմող: Նա Արմենակի մոտ նկատում է ծայնային լավ տվյալներ ու երգելու ունակություն և որոշում է որդուն ուղարկել աշուղի մոտ սովորելու: Այստեղ Պարսամին օգնության է հասնում հարևան գյուղի բնակիչ աշուղ Դովրանը: Վերջինս Արմենակին սովորեցնում է սագ նվագել, որոշ գիտելիքներ է հաղորդում աշուղական արվեստի մասին: Արդեն տասներկու տարեկանում Արմենակը, ընկերակցելով տեղի աշուղներին, շրջագայում է գավառի գյուղերում:

Հայրը ճանաչում էր Սուլդա գյուղի Նշանավոր աշուղ Թիֆիլուն և որդուն ուղարկում է Նրա մոտ սովորելու: Արմենակը Սուլդայում մնում է մոտ երկու տարի, վարպետը նրան հռչակում է աշուղ և կնքում Հավասի աշուղական անվամբ: Հավասի «հավաս» բառից է, որը հայերեն թարգմանվում է մի քանի ձևով՝ ցանկություն, տրամադրություն, սեր: 1929 թ. Հավասին արդեն ընտանիք կազմած և երկու երեխայի հայր, մշտական բնակություն է հաստատում Ախալքալաքում: Այստեղ երիտասարդ աշուղի համար մի նոր ասպարեզ է բացվում: Հավասին բոլոր գյուղերից հրավերներ է ստանում և սիրով այցելում: Ճակատագրի բերումով աշուղը ընկերակցում է տեղի Նշանավոր երաժիշտներ՝ ջութակահար Աշո Գրիգորյանին և դուդուկահար Հարութ Դավթյանին, որոնք բապես նպաստում են Հավասու երաժշտական ունակությունների զարգացմանը:

Ջավախքում ամենուր հնչում են անվանի աշուղի երգերը: Տեղական ռադիոհաղորդումների ծրագրում շարունակ մեծ տեղ են գրավում Հավասու երգերը, որոնք ավելի հաճախ կատարում էր աշուղը:

1944 թ. մեկնում է Երևան, դառնում մայրաքաղաքի մշտական բնակիչ: Ստեղծագործական աշխատանքի մի նոր շրջան է սկսվում Նրա համար:

Հավասու աշուղական արվեստը և գործունեությունը բարձր են գնահատվել. Նա արժանացել է ՀԽՍՀ Ժողովրդական արտիստի կոչման: Աշուղը մահացել է 1978 թ. փետրվարի 22-ին:

Ջավախքի Ախալքալաք քաղաքում տեղադրված է Հավասու բազալտե կիսանդրին, իսկ բնակավայրի փողոցներից մեկը կրում է աշուղի անունը:

Havasi


2003 թ. Երևանում Թումանյան-Տերյան փողոցների խաչմերուկում տեղադրվեց կոմպոզիտորի արձանը, որի հեղինակն էր քանդակագործ Դավիթ Բեջանյանը: Մի քանի տարի անց՝ 2008 թ., Մոսկվայում բացվեց Բաբաջանյանի՝ Տիգրան Արզումանյանի հեղինակած բրոնզե հուշատախտակը:

Բաբաջանյանը մահացել է 1983 թվականի նոյեմբերի 11 ին Մոսկվայում, մարմինը հանգչում է Երևանի քաղաքային գերեզմանատանը:



Notable Russian poet Andrey Dementyev said the following about Arno Babajanian: “I have collaborated a lot with Babajanian. He was a man who was infinitely in love with life. He was so full of humor and was so humane that kindness gave birth to his music. He had an innate sense of beauty. I have never seen such a brilliant person in my life.”

Arno Babajanian was truly one of the greatest composers of the time. He composed the musical called “Baghdasar Aghbar” and the music for the play “My Heart is in the Mountains” by William Saroyan, which was performed at the G. Sundukyan Theater. The music composed for the trumpet became the anthem of the Theater.

Arno Babajanian is known to many as the composer that portrays the image of Yerevan in his music. His family lived in the central part of the city, in Nalbandyan street, which was a home place to many other notable Armenians (Khoren Abrahamyan, Frunze Dovlatyan, academician Emil Gabrielyan and others.)

In Yerevan in 2003 on the corner of Tumanian and Terian Streets the monument to the composer was erected. The author was sculptor David Bejanyan. Some years later in 2008 in Moscow bronze memorial plaque to Arno Babajanian was opened the author was Tigran Arzumanyan.

Arno Babajanian passed away on November 11, 1983 in Moscow. He is buried in the Yerevan Municipal Cemetery.





Սերբիա • Serbia



Խաչատուր Ալմազյան

Զուգակահար Խաչատուր Ալմազյանը ծնվել է Երևանում՝ մտավորականների ընտանիքում։ Կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, նախ՝ Պ. Ի. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում՝ Պետրոս Չայկազեանի դասարանում, ապա՝ Երևանի պետական կոնսերվատորիայում՝ Վիլլի Մուկացյանի կուրսում։ Չետագայում նա շարունակել է ուսումը Բրյուսելի Թագավորական կոնսերվատորիայում՝ Իգոր Օյստրախի ղեկավարությամբ, Նյու Յորքում՝ Միշա Կեյլինի դասարանում, ինչպես նաև Փարիզում՝ Էդուարդ Վուլֆսոնի դասարանում։

1997 թ. նա արժանացել է Բելգիայի ռադիոյի և հեռուստատեսության մրցույթի առաջին մրցանակին։

Ալմազյանը բազմաթիվ համերգներով ներկայացել է համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի երաժիշտների հետ, ինչպիսիք են Կոլյա Բլախերը, Ալեքսանդր Մարկովիչը,

Ռուդոլֆ Վերթեն, Մարկո Պարիսոտտոն, Յուստուս Ֆրանցը, Ֆրանկ Շիփվեյը և շատ ուրիշներ։

Նա հեռուստատեսության ու ռադիոյի համար նվագել և ծայնագրություններ է կատարել Շանհայի սիմֆոնիկ, Օնտարիոյի ֆիլհարմոնիկ, Բելգիայի ռադիոյի ֆիլհարմոնիկ, Մորավիայի ֆիլհարմոնիկ, Պրահայի վիրտուոզներ, Բելգիայի ազգային, սերբական Վոյվոդինա սիմֆոնիկ, գերմանական ազգային ֆիլհարմոնիկ, Եվրոպայի «Շարլեմեյն», Դուբրովնիկի սիմֆոնիկ և մի շարք այլ նվագախմբերի հետ։

2003 թ. երաժիշտը «Շարլեմեյն» նվագախմբի հետ ամերիկյան հեղինակավոր Սոնորիս ընկերության համար ծայնագրել է Մենդելսոնի ջութակի, դաշնամուրի և նվագախմբի համար կոնցերտը։ 2007-ին նա սերբ թավջութակահար Թամարա Սավչի հետ հիմնադրել է «Ալմազյան սիմֆոնիա» նվագախումբը։

Khachatur Almazian

The violinist Khachatur Almazian, was born in Yerevan in an artistic family . He studied in his native city with Petros Haykazian at P.I . Tchaikovsky Special Music School and Villy Mokatsian at Komitas State Conservatory .

Later he studied at the Conservatoire Royale de Bruxelles under Igor Oistrakh , in New-York with Misha Keylin and in Paris with Eduard Wulfson .

In 1997 he won the First Prize at the Belgian Radio and TV Competition.

Almazian played countless concerts with world known musicians such as Kolja Blacher, Alexander Markovich, Rudolf Werthen, Marco Parisotto , Justus Frantz, Frank Shipway and many others...

He performed and recorded for Radio and TV with Shanghai Symphony; Ontario Philharmonic; Belgian Radio Philharmonic;

Moravian Philharmonic, Virtuosi di Praga; National Orchestra of Belgium; Serbian Vojvodina Symphony; Philharmonie der Nationen (Germany); Charlemagne Orchestra for Europe; Dubrovnik Symphony, and many other orchestras...

In 2003 the musician recorded a CD – Mendelssohn 's double concerto for violin, piano and orchestra – for SONORIS label (USA) with Charlemagne Orchestra .

In 2007 with the Serbian cellist Tamara Savic he founded the “Almazian Symphony”– a unique project, all female orchestra, performing in a classical crossover style. After the premiere, which took place in Belgrade, the project was called “New classic for new Millennium” by Serbian media. A special media attention was also given to the American composer Ivana Lisak for her arrangements.



Սա եզակի նախագիծ է, որի կազմում բացառապես իգական սեռի ներկայացուցիչներ են և կատարում են դասական քրոսովեր ոճում: Բելգրադում տեղի ունեցած պրեմիերայից հետո սերբական մամուլը նախագիծը կնքեց «Նոր հազարամյակի Նոր դասական երաժշտություն» անվամբ: Լրատվամիջոցների հատուկ ուշադրությանն արժանացավ Նան Նվագախմբի հետ համագործակցող ամերիկացի կոմպոզիտոր Իվանա Լիզակը:

Պրեմիերայից անմիջապես հետո՝ 2008 թ., աշխարհահռչակ կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցյան «Ալմազյան սիմֆոնիա» Նվագախմբին հրավիրեց Նվագելու իր առաջին՝ «Կուստենդորֆ» ֆիլմերի և երաժշտության փառատոնի բացման արարողությանը: Նույն թվականին Նվագախումբը հանդես եկավ հեղինակավոր EXIT փառատոնի փակման արարողությանը. ի դեպ, այն եվրամիության փառատոների մրցանակաբաշխության շրջանակներում արժանացել է «Լավագույն եվրոպական փառատոն» կոչմանը: Հրավերները հաջորդում էին մեկը մյուսին՝ «Սկոպյեի փառատոն», «Եվրոպայի ռիթմ» փառատոն և այլն... Կարևորագույն ելույթներից է համարվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրավերով Փարիզի համերգը:

2010 թ. Ալմազյանն ու Սավիչը բացառիկ պայմանագիր են կնքել ֆրանսիական «Պալաս» ընկերության և աշխարհահռչակ պրոդյուսերներ Մարկ դի Դոմենիկոյի ու Զվենթին Բաչելետի հետ և միասին ձայնագրել իրենց առաջին՝ «Փոփ սիմֆոնիա» ալբոմը, որը 2013 թ. լույս ընծայեց «Սոնի Մյուզիք Էնթերթեյնմենթ»-ը: Իրադարձությունը լուսաբանվեց բոլոր խոշոր ֆրանսիական հեռուստաալիքներով:

2011 թ. ջութակահարը դարձավ «Միսս Սերբիա» գեղեցկության մրցույթի ժյուրիի նախագահ:

Ալմազյանի կյանքում հատուկ տեղ է զբաղեցնում կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցյայի հետ ընկերությունն ու համագործակցությունը: Ալմազյանը, այս անգամ որպես պրոդյուսեր, հրավիրեց Կուստուրիցյային և Նրա «The No Smoking Orchestra» Նվագախմբին՝ առաջին անգամ համերգով Հայաստանում ներկայանալու:



Just after their premiere, the world known film director Emir Kusturica invited “Almazian Symphony” to perform at his first Küstendorf Film & Music Festival 2008. At the same year the ensemble performed at the closing ceremony of the prestigious EXIT Festival, officially recognized as the “Best Major European festival” among the EU Festival Awards. The ensemble was invited at the opening ceremony of Skopje Summer Festival, and the closing ceremony of the “Rhythm of Europe” Street Festival. One of the highlights was an invitation from UNESCO to perform in Paris.

In 2010 Almazian and Savic signed an exclusive contract with Pallass Production House (France), and together with the world known producers Marc Di Domenico and Quentin Bachelet made their first album “Pop Symphony” released in 2013 by Sony Music Entertainment and announced by all major French TV channels.

In 2011 the violonist became President of Jury of Miss Serbia Beauty Contest.

The friendship and cooperation with Emir Kusturica has had a special place in his life. It was Khachatur Almazian, this time as a producer, who invited Kusturica and his band The No Smoking Orchestra for their first ever visit and concert to Armenia.





Ֆրանսիա • France

Պատրիկ Ֆիորի

Պատրիկ Ֆիորին ծնվել է Մարսելում 1970 թ. սեպտեմբերի 29-ին: Կարճ ժամանակ անց Պատրիկի կորսիկացի մայրը և ազգությամբ հայ հայրը՝ Ժակ Շուշայանը, տեղափոխվում են Կորսիկա. պատանին և նրա չորս եղբայրներն ու քույրերը մեծանում են Կարծեսում: Շուտով ակնհայտ է դառնում, որ Պատրիկը բացառիկ ձայնային տվյալներ ունի: Տղան զուր ժամանակ չի վատնում ու սկսում է հետազա կյանքի համար արժեքավոր փորձ ձեռք բերել. ընտանեկան հավաքույթների ժամանակ հանդես է գալիս ներկայացումներով: Պատրիկի տաղանդավոր երիտասարդ քույրը 13 տարեկանում կազմակերպում է նրա բեմերը Մարսելի օպերային թատրոնի բեմում, տղան ֆրանսերենով ներկայացնում է «Մանկության այգում» մյուզիքլը: Կարճ ժամանակում Պատրիկը սկսեց տարածաշրջանի երաժշտական ասպարեզում մեծ հեղինակություն վայելել: 1992 թ. Պատրիկ Ֆիորին կրկին հայտնվում է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում. նա արժանանում է «Ֆրանկոֆոնիայի շանսոն» մրցույթի պատվավոր առաջին մրցանակին: Շատ շուտով Ֆիորիի բացառիկ ձայնային տվյալների մասին լուրերը տարածվեցին ամենուր, և 1993 թվականին նրա մասին լսում է նաև Մարի Ֆրանս Բրիերը, որն այն ժամանակ Ֆրանսիայի ազգային երկրորդ հեռուստաալիքի ռեժիսորն էր: Պատրիկի հզոր ձայնով հիացած՝ տիկին Բրիերը նոր ծագող աստղին առաջարկում է Ֆրանսիան ներկայացնել «Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթում: Նա ֆրանսիացի երգիչ Ֆրանսուա Վալերիին հանձնարարում է երգ գրել Կորսիկայի մասին, և ահա 1993 թվականին Պատրիկ Ֆիորին հայտնվում է Իռլանդիայում և միլիոնավոր հեռուստադիտողների առջև կատարում է «Մամա Կորսիկա» երգը: Երիտասարդ երգիչը ֆրանսիացիներին հպարտանալու առիթ տվեց՝ զբաղեցնելով պատվավոր 4-րդ հորիզոնականը: Ավելի ուշ Ֆիորին ձայնագրում է իր դեբյուտային ալբոմը: 1997 թ. նա ծանոթանում է ֆրանսիացի հայտնի երգահան էդի Մարնեյի հետ: Մարնեյը, տպավորված նրա ձայնային յուրահատուկ տվյալներով, նրան ներկայացնում է իր երգահան գործընկերոջը՝ Լյուկ Պլամոնդոնին, որն այդ ժամանակ անցկացնում էր «Փարիզի Աստվածամոր տաճարը» մյուզիքլի նախընտրական լսումները: Լսումներին մասնակցելով՝ Ֆիորին միանգամից ընտրվում է Ֆեբի դերակատար: Համագործակցելով կանադացի աստղեր Դանիել Լավուայի և Գարուի հետ՝ Ֆիորին շարունակեց հաղթարշավը Եվրոպայում «Բելլ» մեներգով:





Patrick Fiori

Patrick Fiori was born in Marseilles on 29 September, 1970. Shortly after his birth, Patrick's Corsican mother and Armenian father Jacques Chouchayan moved to Corsica, where the young boy and his four brothers and sisters grew up in Cargèse. It soon became obvious that Patrick had an exceptional voice and he wasted no time in building up valuable life experience, performing at family parties and other local events. The sister of the talented singer arranged his stage debut at the Marseilles Opera at the age of 13, performing in the French musical "Au jardin de l'enfance." Patrick rapidly established an excellent reputation for himself on the regional music scene.

In 1992, Patrick Fiori was back in the media spotlight again, he carried off the top award at the "Chanson Francophone." The word of Fiori's exceptional voice soon spread and in 1993 finally reached the ears of Marie-France Brière, at that time the director of France's second national TV channel France 2. Impressed by Fiori's vocal prowess, Madame Brière asked the up-and-coming star to represent France at the Eurovision Song Contest. She commissioned the French singer François Valéry to write a song about Corsica and on 1993, Patrick Fiori

found himself in Ireland, performing "Mama Corsica" in front of several million viewers. The young singer made France feel proud, coming in at a very respectable fourth place. Later the young singer decided to go ahead and record his debut album.

In 1997, he met the famous French songwriter Eddy Marnay. Impressed by the young singer's exceptional voice, Marnay put Fiori in touch with his songwriting colleague Luc Plamondon, who was at that time auditioning singers for their forthcoming musical "Notre-Dame de Paris." After the audition he instantly landed the role of Phoebus. Teaming up with his Canadian co-stars Daniel Lavoie and Garou, Patrick Fiori went on to score a phenomenal hit in Europe with the single "Belle."

The year of 1998 proved to be a major year in Patrick Fiori's career. Following the phenomenal success of "Notre-Dame de Paris," the French singer was obviously much in demand. "Disney" invited Fiori to record the soundtrack for the French version of their animated film "Mulan" and Steven Spielberg's production company Dreamworks also asked the singer to provide vocals for the soundtrack of the French version of "The Prince of Egypt."





1998 թ. նշանակալի եր Պատրիկ Ֆիորիի կարիե-
րայում: «Փարիզի Աստվածամոր տաճարը» մյու-
զիքի բացառիկ հաջողությունից հետո Պատրիկն
իսկապես դարձավ Ֆրանսիայի ամենապահանջ-
ված երգիչներից մեկը: «Դիսնեյ» ընկերությունը
Նրան հրավիրեց ձայնագրելու «Մուլան» անի-
մացիոն ֆիլմի, իսկ Սթիվեն Սփիլբերգի «Դրիմ-
վորքս» ընկերությունը՝ «Եգիպտոսի արքայազնը»
ֆիլմի ֆրանսիական տարբերակների սաունդ-
թրեքները:

2000 թ. ապրիլին Ֆիորին ձայնագրեց իր Նոր
«Քրիզալիդ» ալբոմը:

Հաջորդ տարվա ընթացքում Ֆիորին հյուրախա-
ղերով հանդես եկավ Շվեյցարիայում, Բելգիայում և
Կանադայում:

2002 թ. սեպտեմբերին նա լույս ընծայեց իր Նոր
ալբոմը՝ նվիրված հայրենի Մարսել քաղաքին. ալ-
բոմը վաճառվեց 300 000 օրինակով: Հաջորդ երկու
տարվա ընթացքում Պատրիկն իր Ժամանակն ու
եռանդն ամբողջությամբ նվիրեց հյուրախաղերին,
շրջագայեց Ֆրանսիայով, հանդես եկավ ավելի քան
130 համերգներով:

Ողջ երկրով իրականացված լարված շրջագա-
յությունից հետո երգիչը վերադարձավ ձայնագր-
ման ստուդիա ու սկսեց աշխատել հաջորդ ալբոմի
վրա, որը լույս տեսավ 2005 թ.:

Հետագա տարիները ևս Պատրիկի համար բեղմ-
նավոր էին. մինչ օրս էլ նա ֆրանսիական շոու-
բիզնեսի պահանջված աստղերից է:

In April 2000, Fiori went on to release a new album
entitled "Chrysalide."

The following year was marked by tours to Switz-
erland, Belgium and Canada.

In September 2002, he released a new album dedi-
cated to his hometown Marseilles, with 300,000 sold
copies.

The next two years Patrick devoted much of his time
and energy to touring. He ended up travelling all over
France, performing more than 130 concerts.

After this extensive national tour, the singer returned
to the studio to begin work on a new album, which was
released in 2005.

The following years have also been very productive
for Patrick; until now he is considered to be one of the
most demanded stars of French show business.





Ալան Ալթինօղլու

Ալան Ալթինօղլուն ծնվել է 1975 թ. Ստամբուլից գաղթած հայերի ընտանիքում։ Նա սովորել է Փարիզի ազգային բարձրագույն կոնսերվատորիայում, որտեղ հետագա տասը տարին նաև դասավանդել է որպես վոկալ անսամբլային դասարանի պրոֆեսոր։

Ալան Ալթինօղլուն մշտական հյուր է համաշխարհային այնպիսի առաջատար օպերային թատրոնների, ինչպիսիք են Նյու Յորքի Մետրոպոլիտեն և Չիկագոյի լիրիկական օպերային, Բուենոս Այրեսի Քոլոն, Շտատսօպեր Վիեն, Բեռլինի Դոյչօպեր, Փարիզի բոլոր երեք օպերային թատրոնների, ինչպես նաև այլ հայտնի բեմերի։ Նա ելույթներ է ունեցել նաև Չալցբուրգի, Օրանժի և էքս ան Պրովանսի փառատոններում։

Լինելով վարպետ նվագախմբային դիրիժոր Ալթինօղլուն ելույթներ է ունենում այնպիսի ականավոր նվագախմբերի հետ, ինչպիսիք են Չիկագոյի սիմֆոնիկ, Ֆիլադելֆիայի, Ֆրանսիայի ազգային, Փարիզի, Ռադիոֆրանսի ֆիլհարմոնիկ, Լիոնի ազգային, Բիրմինգհեմ քաղաքի սիմֆոնիկ, Դրեզդենի, Բեռլինի, Վիեննայի ռադիոյի սիմֆոնիկ, Ցյուրիխի Տոնհալե, Լիսաբոնի Գյուլբենկյան և մի շարք այլ նվագախմբերը։

Անցած թատերաշրջանի օպերային կարևոր իրադարձությունները ներառում են վերադարձ Մետրոպոլիտեն օպերային թատրոն՝ Մասնեի «Վերթերի տառապանքները», «Սիմոն Բոկանեգրա», «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերաների, ինչպես նաև Վիեննայի Շտասօպերայում «Դոն Ջիովանիի», և Ցյուրիխում «Սալոմեի» նոր ներկայացումների ղեկավարումը։

Այս թատերաշրջանի օպերային ելույթները ներառում են նաև Վիեննայի Շտատսօպերայում «Դոն Կառլոս» և «Սալոմե» օպերաները, «Մանոն Լեսկո» նոր ներկայացումը, Մյունխենի Բայրիխ Շտատսօպերայում, Փարիզի Ազգային օպերային թատրոնում «Դոն Ջիովանի» օպերայի, Մայքլ Չանեկեի դերի ներկայացումը և Ցյուրիխում Քրիստիան Ջոսֆի նոր օպերայի՝ «Ռոտե Լաթերնե» համաշխարհային

պրեմիերան։

Ալթինօղլուն դեբյուտային ելույթներ կունենա Լոնդոնի թագավորական օպերային թատրոնում («Դոն Ջիովանի»), ինչպես նաև Բայրոթյան Ֆեսթսպիելում («Լոհենգրին»)։ Դեբյուտային ելույթներում ներառված են Գոթենբուրգի սիմֆոնիկ, ինչպես նաև Ցյուրիխի «Թոնհոլ» նվագախմբերի ղեկավարումը։ Նա կղեկավարի նաև Վիեննայի Մյուզիքֆերեինում (Musikverein) Պոլենսի «Ստաբատ Մատերի» ներկայացումը և Մոցարտի «Ռեքվիեմը», որը նվիրված կլինի շայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին։

Խմբավարությանը զուգահեռ Ալթինօղլուն լավագույնս տիրապետում և հատուկ նշանակություն է տալիս Լիեդի երգացանկին։ Նա պարբերաբար համագործակցում է մեցցո-սոպրանո Լորա Գուբիշի հետ. «Naïve» ծայնագրման ստուդիայում նրանց վերջին համատեղ ծայնագրությունը ներառում է դը Ֆալլայի, Օբրադորսի, Գրանադոսի, Բերիոյի և Բրամսի ժողովրդական երգերը, ինչպես նաև Մորիս Ռավելի և Չենիի Դյուպակի երգերի ծայնագրությունը։

«Naïve» ծայնագրման ստուդիան թողարկել է Սիմֆոնիա Վարսովիայի հետ համատեղ Չենիի Գորեկիի Երրորդ սիմֆոնիայի, Ֆրանսիական ազգային նվագախմբի հետ Թանգիի թավջութակի կոնցերտի և Դուսապենի «Պերելա» օպերայի ծայնագրությունները։ Բացի այդ, այս ամառ Ալթինօղլուն ծայնագրվելու է «Գերմանական գրամֆոնին» արժանացած Պյոտր Բեչալայի հետ։ Անցյալ թատերաշրջանի ծայնագրությունների շարքում են Մոնպելյեի ազգային նվագախմբի հետ Լալոյի «Պեռլա» օպերան, Ռոբերտո Ալագնայի և Բեռլինյան Ռոնֆոլդ սիմֆոնիկ նվագախմբի հետ Լիստի կոնցերտները, ինչպես նաև «Պենտատոն» ծայնագրման ստուդիայի համար Նարե Արղամանյանի ելույթը։ «Ակորդ» ծայնագրման ընկերությունը թողարկել է Չոնեգերի «Ժաննա Դ'Արկը խարույկի վրա» օրատորիայի DVD տարբերակը։

Alain Altinoglu

Alain Altinoglu was born in 1975 into an Armenian family who were originally from Istanbul. Alain Altinoglu studied at the Conservatoire National Supérieur de Musique de Paris, where he has also taught as a professor of the vocal ensemble class for ten years.

Alain Altinoglu is a regular guest at the world’s leading opera houses such as the Metropolitan Opera New York, the Lyric Opera of Chicago, the Teatro Colon in Buenos Aires, the Staatsoper Wien (the Vienna State Opera), the Deutsche Oper Berlin, and all three opera houses in Paris as well as on many other famous stages. He has also appeared at the festivals in Salzburg, Orange and Aix-en-Provence.

An accomplished orchestral conductor, Altinoglu appears with such distinguished orchestras as the Chicago Symphony, Philadelphia Orchestra, Orchestre National de France, Orchestre de Paris, Orchestre Philharmonique de Radio France, Orchestre National de Lyon, City of Birmingham Symphony Orchestra, Staatskapelle Dresden, Staatskapelle Berlin, Radio-Symphonieorchester Vienna, the Tonhalle Orchester Zurich, the Gulbenkian Orchestre Lisbon and many others.

Last season’s opera highlights included a return to the Met (the Metropolitan Opera) with a production of Massenet’s “Werther”, “Simon Boccanegra” (Giuseppe Verdi), “Le Nozze di Figaro” and “Don Giovanni” (Wolfgang Amadeus Mozart) at the Staatsoper Wien, as well as “Salome” (Richard Strauss) in Zurich.

This season, opera appearances include “Don Carlos” and “Salome” at Staatsoper Wien, a new production of “Manon Lescaut” at Bayerische Staatsoper Munchen, a Michael Haneke

production of “Don Giovanni” at Opéra National de Paris and a world premiere production of Christian Jost’s new opera “Rote Laterne” in Opera House Zurich.

Altinoglu will give debut appearances at London’s Royal Opera House (“Don Giovanni”) as well as Bayreuther Festspiele (“Lohengrin”, Wagner). On the concert podium, debut appearances include Gothenburg Symphony as well as Tonhalle Orchester Zurich. He will lead the performance of Poulenc’s “Stabat Mater” at the Musikverein in Vienna and Mozart’s Requiem to mark the 100th anniversary of the Armenian Genocide in April. Alongside his conducting, Altinoglu maintains a strong affinity and command over the Lied repertoire. Regularly accompanying mezzo-soprano Nora Gubisch, their most recent recording for Naïve record label includes folk songs by de Falla, Obradors, Granados, Berio and Brahms. Other recordings together have included a disc of songs by Henri Duparc (Cascavelle) and Maurice Ravel. The Naïve also released a recording of Henryk Gorecki’s Third Symphony, together with the Sinfonia Varsovia as well as Tangy’s Cello Concerto with the Orchestra National de France and Dusapin’s “Perela”. Furthermore, this summer Altinoglu records a disc with Deutsche Grammophon artist Piotr Beczala. Past releases include Lalo’s Fiesque with the Orchestre National de Montpellier and Roberto Alagna for Deutsche Grammophon and Liszt’s Piano Concertos with the Rundfunk-Sinfonie-Orchester Berlin and Nareh Arghamanyan for Pentatone. A DVD recording of Honegger’s “Jeanne d’Arc au bûcher” was released by the French record label Accord.





Lիզ Սարյան

Լիզ Սարյանը ծնվել է հայ գաղթականների ընտանիքում։ Մանկուց ականջ դնելով մոր երգած հայկական երգերին՝ Լիզը սկսել է երգել։

Նա առաջին անգամ հեռուստատեսյանին հայտնվել է 1964 թ. մայիսի 1–ին՝ կիրակնօրյա հաղորդման ժամանակ, որի սպորտային հատվածը ներկայացնում էր Ռեյմոն Մարսիակը, իսկ Ռոժե Լանգաքը և Գի Լյուքսը՝ խտրադայինը։ Չաղթողը պետք է մրցոյթին ներկայանար հաջորդ շաբաթ։

Բազմաթիվ մասնակիցներից ընտրված Լիզը հանդես եկավ կոմպոզիտոր Ժորժ Կառվարենցի «Բալալայկա» երգով։

Լիզ Սարյանը երկրորդ անգամ ներկայացավ ժան–ժակ Վարուժյանի ստեղծագործության հիման վրա Պոլ Կուլակի գրած «Փոթորիկը» երգով։

Ժյուրիի նախագահը՝ Ռոբեր Բովեն, առաջին մրցանակը շնորհեց Լիզ Սարյանին։ Արդյունքում Լիզը «Դիսկ Վոգ» ընկերության հետ կնքեց սկավառակի ծայնագրման պայմանագիր։

Չետո Նրան առաջարկվեց հյուրախաղերով հանդես գալ Ֆրանսիայի հարավում։ Երջագայության ընթացքում Նրան հնարավորություն ընձեռվեց հանդես գալու այնպիսի հայտնի արտիստների հետ, ինչպիսիք են Պետուլա Կլարկը, Ֆրանսուա Արդին, Ռիշար Անտոնին, Զոնի Չոլիդեյը և հանրաճանաչ ժակ Բրեյը։ Կարճ ժամանակ անց Նա հասկանում է, որ արվեստի աշխարհում տիրող մթնոլորտը ճնշող է, հարցա–

զրույցների ընթացքում, որոնք տալիս էր, ասելիք չունեի։ Շուտով որոշում է ինչ–որ ժամանակով հեռանալ բեմից, քանի որ դժվարությամբ էր շփվում լրատվամիջոցների ներկայա–ցուցիչների հետ։

Չնայած մեկուսացմանը՝ «Vogue»–ը Նրան ներկայացնում է «ՄԻԴԵՄ» երաժշտական փառատոնին՝ ճայնասկավառակ–ների և երաժշտական հրապարակումների միջազգային շուկային, որտեղ Նրա արվեստը մեծ պահանջարկ ուներ։

Ամուսնությունն ու հետագայում երեխայի ծնունդը Նոր լույս են սփռում Նրա կյանքին։

Այնուհետև Նրան համակում է մայրենի լեզվով երգելու ցանկությունը, լեզու, որի նկատմամբ Նա առանձնահատուկ մոտեցում ուներ։ Լիզ Սարյանը կոմպոզիտոր Արա Պար–թեյանի ղեկավարությամբ ծայնագրում է իր առաջին սկավառակը, որը կրում էր «30 CM» անունը։ Նա ելույթներով հանդես է գալիս բազմաթիվ բարեգործական երեկոների ընթացքում։ Չետագայում Լիզը ելույթ է ունենում տարբեր երկրների բեմահարթակներում՝ Նյու Յորք, Կահիրե, Ալեք–սանդրիա, Սան Պաուլո, Բրյուսել, Ժնև, Լոնդոն և այլն... ամենուր, որտեղ կար հայ համայնք։

Թեև վախենում էր ինքնաթիռից, Լիզ Սարյանը որոշում և առաջին անգամ Չայաստան է գալիս 1984 թ. և տալիս 15 համերգ։ Այդ համերգներն անջնջելի հետք թողեցին Նրա հոգում՝ դառնալով հայ հասարակության կողմից ջերմ

ընդունելության հուշ։ Սա զգացողություն էր, որ երբևէ Լիզը չէր ունեցել, երբ այլբեմահարթակներում հանդես էր գալիս։ Չամերգների ընթացքում Սարյանին նվա–գակցում էր Ֆրեդերիկ Մանուկյանը, Չայկական ռադիոյի և հեռուստատեսության պետական նվա–գախումբը՝ Մելիք Մավիսակալյանի գլխավորու–թյամբ։

1974 թ. Մարտելում Լիզն առաջին անգամ հանդիպում է Մելինե Մանուշյանին՝ ֆրանսիական Դիմադրության շարժման հայտնի գործչի՝ Միսաք Մանուշյանի կնոջը։ Ծնվում է Նրանց մեծ բարեկամությունը, որը տևում է մինչև Մելինեի մահը։

Նրանք համակարծիք էին անարդարության բոլոր ձևերի դրսևորման հարցում։ Այդ ժամանակվանից ի վեր Նրանք ծեռնամուխ են լինում Չայոց ցեղասպան–ության ճանանաչման ընթացքին։

Սարյանի առաջին համերգը Երևանում տեղի է ունե–ցել 1984 թ. Կարեն Դեմիրճյանի անվան մարզա–համերգային համալիրում, այնուհետև 2009 թ. Աիդա Կառվարենցի և Սեդա Ազնավուրի հետ համատեղ ելույթ է ունեցել Երևանի օպերային թատրոնում, Գյումրիում և Ստեփանակերտում՝ «Քեզ համար, Չայաստան» համերգային ծրագրի շրջանակներում՝ նվիրված Շառլ Ազնավուրի ծննդյան 85–ամյակին։

Լիզ Սարյանն ապրում է Ֆրանսիայում, չի ստեղ–ծագործում, սակայն շարունակում է վայելել իր հանդիսատեսի սերը։

Liz Sarian

Liz Sarian was born to a family of Armenian Genocide survivors. She started to sing in childhood after she had listened to Armenian songs sung by her mother.

Liz Sarian first appeared on the screen on May 1, 1964, in a Sunday TV show. The sport part of the program was presented by Raymond Marcillac, whereas Roger Lanzaç and Guy Lux introduced the variety section. The winner was to arrive the following week.

Having performed the composer Georges Garvarentz' song Balalaïka, she was delighted to have been shortlisted among the numerous participants. At the second round Liz Sarian performed Paul Koulak's (Koulaksezian) song – the variation of Jean–Jacques Varoujian's composition La tempête – and was awarded the first prize by the president of the jury Robert Beauvais. As a result, Liz Sarian signed a contract with the Disques Vogue record label. Afterwards she was suggested taking a tour to the South of France, where she had the opportunity to sing with the famous artists such as Petula Clark, Francoise Hardy, Richard Anthony, Johnny Hallyday and Jacques Brel.

However, the fake atmosphere of the bohemian life and meaningless interviews created difficulties communicating with media represen–tatives and she took the decision to leave the stage for some time. Nevertheless, the Vogue record label introduced her at MIDEM (the annual international market of discs and music publications) in Cannes as a highly demanded artist.

The marriage and baby birth brought a new meaning into her life. Liz Sarian was overwhelmed with the desire to sing in her native language. She recorded her first disc, named “30 CM” under the guidance of the composer Ara Bartevian.

She sang at various charity evenings and international stages: New York, Cairo, Alexandria, Geneva, London– anywhere where the Armenian community existed.

Despite her fear for planes, she first flew to Armenia in 1984 projecting 15 concerts. The latter forever remained in her heart as the memory of hospitable acceptance of the Armenian society. This was a feeling that she had never felt before in other places. The concerts were accompanied by Frederic Manoukian and the Armenian radio and television state orchestra headed by Melik Mavisakalyan.

Liz first met the spouse of a famous activist of Resistance Meline Manouchian in Marseille, in 1974. They became big friends and the two women regularly met each evening until the death of Meline. They shared the same ideas about the unfair things, held common opinions and launched the campaign for the recognition of the Armenian Genocide.

Sarian's first concert in Yerevan took place in 1984 at Karen Demirchyan Sports and Concerts Complex. She is also known for joint concerts with Aida Garvarentz and Seda Aznavour. In 2009, they performed in Yerevan Opera Theater, and then in Gyumri and Stepanakert, in the context of the concert program "For You, Armenia" devoted to Charles Aznavour's 85th anniversary.

Liz Sarian lives in France, she doesn't compose, but is still being appreciated and loved by her audience.





Մեծ նվիրվածությամբ, համբերությամբ ու սիրով Լևոնն ի վերջո կարողանում է տիրապետել դուդուկին և նրա նրբություններին:

Այդ ժամանակից ի վեր արվեստագետը ինքնավստահությամբ է ձեռք բերում և աստիճանաբար ճանաչվում որպես աշխարհի տաղանդավոր դուդուկահարներից մեկը:

1985 թ. կոմպոզիտոր Ժորժ Կառվարենցի երաշխավորությամբ Նրան են վստահում «Դրոշմված հիշողություններ» ֆիլմի երաժշտության դուդուկի հատվածը: Դա կինոյում նրա առաջին համագործակցությունն էր. դրան հաջորդեցին Լևրի Վեռնոյի «Մայրիկ», «Պարադիզ փողոց 588» և շատ այլ ֆիլմեր:

first collaboration in the film industry, which was followed by Henri Verneuil's Mayrig, Paradise Street 588, and many others. The gifted musician spread the duduk melody over the screens.

Soon an incredible event took place that seems to have changed his life. In 1992 Peter Gabriel offered Levon Minasian to take part in the creation of his album Us. Later Peter asked him to play at the opening ceremony of his solo world tour “Secret World Live”. Levon Minasian became popular and later collaborated with Charles Aznavour, Patrick Fiori, Ellen Segara, Christoph Mae, Daniel Lavua, Sting, and many other musicians. Afterwards Levon headed off to a new collaboration with the composer Armand Amar.



Լևոն Մինասյան

Լևոն Մինասյանը ծնվել է Մարսելում՝ Սուրբ-ժերոմ թաղամասում, որտեղ նրա նախնիները ապաստան էին գտել: Շրջապատված լինելով ընտանիքի անդամներով և հայ համայնքով՝ դեռևս երիտասարդ հասակում ժողովրդական գործիքների խմբում Լևոնը սկսում է մանդոլինա նվագել:

Տասնհինգ տարեկան էր, երբ ծնողները նրան հայկական դուդուկ նվիրեցին, և այդ օրվանից նա այն այլևս ձեռքից վայր չդրեց:

Ֆրանսիայում հայ արտիստների շրջագայությունների ժամանակ պատանի Լևոնն իր ընտանիքի հետ անբաժան էր նրանցից: Այնուհետև 70-ական թվականների վերջերին մի քանի անգամ ուղևորվում է Հայաստան՝ հատկապես Ջիվան Գասպարյանից և Վոլոդյա Հարությունյանից դուդուկի դասեր առնելու:

Levon Minassian

Levon Minassian was born in Marseilles, Saint-Jerome district, where his ancestors had settled down. Surrounded with family members and the Armenian community the young Levon started playing the mandolin in a folk band. He was fifteen years old when his parents presented him with the Armenian duduk and since then he has never handed it down. Levon and his family always accompanied the French tours of Armenian artists. Then, in the late 70s, Levon travelled to Armenia for several times with the main goal to take master classes with the famous duduk players Djivan Gasparyan & Vladimir Harutyunyan. With great devotion, patience and love Levon finally was able to master duduk and its nuances. Since then, he gradually obtained self-confidence and recognition as one of the world's talented duduk players. In 1985, the composer Georges Garvarentz entrusted him with the duduk part of the soundtrack to the film Engraved Memories. It was his



Չետո կատարվեց անհավատալի մի իրադարձություն, որը կարծես թե փոխեց Նրա կյանքը: 1992 թ. Պիտեր Գաբրիելը դիմեց Լևոն Մինասյանին՝ մասնակցելու իր «ԱՏ» ալբոմի ստեղծմանը, իսկ հետո նաև սուր կատարմամբ բացելու իր համաշխարհային շրջագայության «Secret world live tour» մենահամերգները:

Լևոն Մինասյանը դարձավ հանրաճանաչ դուդուկահար և հետագայում համագործակցեց Շառլ Ազնավուրի, Պատրիկ Ֆիրրիի, Էլեն Սեգարայի, Քրիստոֆ Մաեի, Դանիել Լավուայի, Սթիվեն և շատ այլ երաժիշտների հետ: Որոշ ժամանակ անց Լևոնը սկսում է Նոր համագործակցություն կոմպոզիտոր Արմանդ Ամարի հետ:

2003 թ. հենց Նրա հետ էլ ստեղծում է իր առաջին «Լևոն Մինասյան և ընկերներ» ալբոմը, որտեղ ընդգրկված էր աշխարհիկ ու հոգևոր երաժշտություն: Այստեղ վարպետը դուդուկը համատեղել էր աշխարհի այլ գործիքների հետ՝ հնդկական ջութակից մինչև ուղ:

2003 թ. Նախագահ Ժակ Շիրակը Նրան շնորհում է Արվեստի և գրականության ասպետի պատվավոր կոչում:

2006 թ. ստեղծվում է Նրա երկրորդ՝ «Songs from a world apart» ալբոմը:

Այսօր Լևոն Մինասյանն անկասկած իր սերնդի լավագույն դուդուկահարներից մեկն է և նպաստում է այդ գործիքի բացահայտմանն ու ճանաչմանը:

In 2003, Levon Minassian released his first album “Levon Minassian and Friends” with Armand Amar which included both secular and spiritual music. The master combined duduk with other folk instruments ranging from Indian violin to oud. In 2003, the President Jacques Chirac awarded him the Honorary title of Knight of Arts and Literature. In 2006, he released his second album, called “Songs From a World Apart”.

Levon Minasyan, surely, is one of the best duduk players of his generation and he does his best to introduce the instrument and spread it in all the continents.



Միշել Լեգրան

«Երբ դեռ մանուկ էի, իմ ցանկությունն էր կյանքում երաժշտությամբ շրջապատված լինելը: Իմ երազանքն էր ոչինչ բաց չթողնել: Այդ պատճառով էլ ես երբեք չեմ կենտրոնացել երաժշտության միայն մեկ ուղղության վրա: Ինձ դուր է գալիս նվագել, խմբավարել, երգել ու ստեղծագործել բոլոր ոճերում: Այս պատճառով էլ զբաղվում եմ ամեն ինչով, բնավ դա չի նշանակում ամեն ինչից մի քիչ, հակառակը: Ես այս ամենն անում եմ միանգամից, լուրջ, անկեղծ ու մեծ նվիրումով:»

Միշել Լեգրանը ծնվել է 1932 թ. երաժշտական ընտանիքում. երաժշտական տաղանդով աչքի էին ընկնում հայրը՝ Ռայմոնը, Լեգրանը, և մայրական պապը՝ Ժակ Չելիանը, որը հայկական ծագում ուներ և սերում էր բուրժուական ընտանիքից: Տասը տարեկանում նա ընդունվում է Փարիզի կոնսերվատորիան, որն անսպասելի հայտնություն էր տղայի համար: «Մինչ այդ իմ մանկությունը միապաղաղ էր ու տխուր, – ասել է նա, – կյանքս անցնում էր մի հին դաշնամուրի շուրջը, ես միայնակ էի ու ծանձրանում էի: Սակայն մի օր, երբ մասնակցեցի Լուսեթ Դիսքավեզի երաժշտության տեսության դասընթացին, բացահայտեցի այն աշխարհը, որն ինձ էր պատկանում, հանդիպեցի մարդկանց, որոնք ինձ հետ միևնույն լեզվով էին խոսում: Չենց այդ պահից ես հասկացա, որ կյանքը հետաքրքիր է ու շատ բան կարող է առաջարկել»:

Նադիա Բուլանժի, Չենրի Զալանի և Նոել Գալոնի ղեկավարությամբ գերազանցության վկայականներով Լեգրանն ավարտում է կոնսերվատորիան: Որպես երաժշտական ռեժիսոր՝ համագործակցում է Մորիս Շևալյեի հետ: Նա ֆրանսիացի այս հանրահայտ երգչին ուղեկցում է



Michel Legrand

“Ever since I was a boy, my ambition has been to live completely surrounded by music. My dream is not to miss out anything. That’s why I’ve never settled on one musical discipline. I love playing, conducting, singing and writing in all styles. So I turn my hand to everything – not just a bit of everything. Quite the opposite. I do all these activities at once, seriously, sincerely and with deep commitment.”

Born in 1932, Michel Legrand came from a family with a musical tradition represented by his father, Raymond Legrand and his uncle Jacques Hélian. His maternal grandfather was descended from the Armenian bourgeoisie. When he was ten, he entered the Paris Conservatory, which proved to be an unexpected revelation. “Until then, my childhood had been flat and unhappy,” he relates. “My life revolved around an old piano and I was very bored. I was very lonely. Suddenly, when I joined Lucette Descaves’ music theory class, I discovered a world that belonged to me, people who spoke my language. From then on, I felt that life had something exciting and motivating to offer.”

After studying under the iron rule of Nadia Boulanger, Henri Challan and Noël Gallon for several years, Legrand left the Conservatory with top honors in harmony, piano, fugue and counterpoint. He immediately gravitated to the world of song, working as an accompanist musical director to Maurice Chevalier. He traveled with the famous French singer on his international tours. This gave him the opportunity to visit the United States for the first time. His instrumental LP, I Love Paris, did extremely well in that country in 1954. His first hit record also had great symbolic significance, revealing his



Կաննի փառատոնին «Ոսկե արմավենի» և «Լուի Դելլաբ» մրցանակներին արժանանալուց հետո նրա «Շերբուրգյան հովանոցներ»-ը, չնայած մասնագետների հոռետեսական կանխատեսումներին, համաշխարհային հաջողության հասավ:

Բաժանվող սիրահարների՝ «Ես չեմ կարող ապրել առանց քեզ» երգը, որն առաջինը ներկայացրեց Նանա Մուսկուրին, շատ հայտնի դարձավ, հիմնականում Նորման Գիմբելի («Ես կսպասեմ քեզ») անգլերեն տարբերակի շնորհիվ:

1968 թ. Լեգրանը տեղափոխվում է Լոս Անջելես: Չե-տագայում նա որոշում է իր ժամանակը բաշխել Փարիզի և Չիկլոդի միջև՝ փորձելով ամեն բան, որ հանդիպում էր իր ճանապարհին երաժշտության ասպարեզում:

Կինոնկարի երաժշտությունը երկխոսության այլըն-տրանքային տարբերակ համարելով՝ Միշել Լեգրանը եվրոպացի եզակի կոմպոզիտորներից է, ում ֆիլմա-ցանկում առկա են այնպիսի անուններ, ինչպիսիք են Օրսոն Ուելսը, Մարսել Կարնեն, Քլինթ Իսթվուդը, Նորման Ջոիսը և ուրիշներ:



միջազգային շրջագայությունների ժամանակ: Այսպիսով, նա առաջին անգամ ԱՄՆ այցելելու հնարավորություն է ունենում: Նրա գործիքային՝ «Ես սիրում եմ Փարիզը» ստեղծագործությունը 1954 թ. Նահանգներում մեծ հաջո-ղություն է ունենում: Նրա ծայնագրած առաջին հիթը ևս խորհրդանշական էր. դրանով նա բացահայտեց իր ներուժը: 22-ամյա տաղանդավոր երիտասարդը կանգ չէր առնում, շարունակում էր ամրապնդել դիրքերը թե՛ Ֆրանսիայում, թե՛ արտերկրում:

1950-ականներին Միշել Լեգրանը սկսեց երաժշտություն գրել նաև այն երաժիշտների համար, որոնց նվագակցում էր: Նրա առաջին հանրահայտ ստեղծագործությունը՝ «La Valse des Lilas», աչքի էր ընկնում յուրահատուկ մեղե-դայնությամբ, ինչն էլ հետագայում դարձավ նրա առան-ձնահատուկ ոճը. «Ես մեծ հավատ եմ դնում երաժշտու-թյան հիմքում»,– խոստովանում է Լեգրանը:

1955 թ. Միշել Լեգրանը սկսեց Նոր արտահայտչամիջոցներ կիրառել, հատկապես երբ գրեց երաժշտություն Անրի Վեռնոյի «Les Amants du Tage» կինոնկարի համար: Չորս տարի հետո ֆրանսիական Նոր ալիքի ի հայտ գալու հետ, Լեգրանը դարձավ ֆրանսիական Նոր կինոյի վերածննդի ակտիվիստներից մեկը: Նա սկսեց համագործակցել հանրահայտ կինոգործիչների հետ:

international potential: the talented 22 year old man did not look back and continued going from strength to strength in France and abroad.

In the 1950s, Michel Legrand also started composing for some of the artists he was accompanying. His first great song La Valse des Lilas, displayed an individual style of melodic writing which soon became his hallmark. “I put a great deal of faith in melody,” he admits.

In 1955, Michel Legrand turned his hand to another mode of expression when he wrote the film score to Les Amants du Tage by Henri Verneuil. Four years later, with the advent of the French New Wave, he became one of the architects of the revival of French cinema. He began collaborating with famous film directors. Along with the Palme d’Or award at the Cannes festival and the Prix Louis Delluc, The Umbrellas of Cherbourg achieved massive worldwide success despite the pessimistic predictions of many industry professionals. The parting lovers’ theme song, Je ne pourrai jamais vivre sans toi, initially covered by Nana Mouskouri, became a popular standard, largely owing to the English adaptation by Norman Gimbel (I Will Wait for You). Legrand moved to Los Angeles in 1968.



Այդուհանդերձ, կինոյի ոլորտում՝ Նրա հեղինակավոր մրցանակները (երեք «Օսկար») որևէ ազդեցություն չթողեցին Նրա ստեղծագործական կյանքի վրա:

«Օսկար»-ը, -պնդում է Լեգրանը,- մի ոսկե աստղ է, հաճոյախոսություն, հաջողության քաղցր համ, սակայն դա չի կարող որևէ դրական կամ բացասական ազդեցություն ունենալ կոմպոզիտորի վրա, այդ մրցանակի արդյունքում ուժեղ կամ թույլ կողմերը մնում են անփոփոխ»:

1964 թ. Միշել Լեգրանը որոշում է երգել իր երգերը, ևս մեկ տող ավելացնելով իր բազմազան կենսագրության մեջ: Նրա ծայնը վերածվում է մի Նոր արտասովոր գործիքի:

«Ես ցանկանում էի, - խոստովանում է Նա,- պարզապես փորձել այդ ամենը: Այդ քայլին գնացել եմ Նաև իմ ամոթխաժությունը հաղթահարելու համար: Տարիներ շարունակ բեմում իմ ունկնդրին մեջքով հանդես գալուց հետո որոշեցի փորձել Նաև հակառակը, շրջվել ու դեմ հանդիման կանգնել Նրանց»:


Միշել Լեգրանը սկսում է աշխատել իր ծայնի վրա և կենտրոնանում է մասնավորապես երգացանկի հարստացման ուղղությամբ:

Later he decided to divide his time between Paris and Hollywood, working on anything that appealed to him in the field of music. Regarding film music as another form of dialogue, Michel Legrand is the only European composer with a filmography that includes names like Orson Welles, Marcel Carné, Clint Eastwood, Norman Jewison and others. Nonetheless, his prestigious awards in the field of screen music (three Oscars) have had no impact on his creativity. “An Oscar”, he stresses with conviction, “is a gold star, a piece of flattery, the sweet taste of success but it doesn’t make you any better or worse as a composer, your strengths or weaknesses remain unchanged.”

In 1964, Michel Legrand decided to perform his songs himself, adding yet another string to his bow. His voice became an additional instrument that he could put to unaccustomed use. “My idea,” he admits, “was simply to give it a try, to see what it was all about. I also did it to overcome my shyness. After years of being on stage with my back to the audience, I made up my mind to do the opposite, to turn round and face the spectators...”

Michel Legrand worked on his voice and focused in particular on building up his repertoire.





«Հաջողության հասնելու համար,- ասում է նա,- հարկավոր է լինել այն մեկը, ով կանի քայլեր, որ նախ-կինում ոչ ոքի մտքով անգամ չէր անցել: Այդպիսով նաև կարող ենք բացահայտել ինքներս մեզ: Ես ցանկանում եմ հասկանալ, ինչ կարող եմ անել, եթե անգամ դրա համար հարկավոր է գնալ ավելի հեռու»:

2009 թ. սեպտեմբերի 15-ին Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ Հայաստանի պետա-կան երիտասարդական նվագախմբի և Միշել Լեգրանի համատեղ համերգը: «Շերբուրգյան հովանոցները» խորագրով երեկոյի ընթացքում երաժշտության վիր-տուոզի ղեկավարությամբ Պետական երիտասարդա-կան նվագախումբը ներկայացրեց մանետրոյի հեղի-նակային գործերը:

Միշել Լեգրանի կերպարի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ նա մերժում է կարիերայի գաղափարը. «Ես ասում եմ նպատակների, արդյունքների և սահ-մանների գաղափարը: Ես արվեստագետ եմ, այլ ոչ թե քաղաքական գործիչ»:


2014 թ. Լեգրանը շրջում է ողջ աշխարհով ու հանդես գալիս ավելի քան 60 համերգով...

"The way to make progress," he declares, "is to be the only one who can create things that no one has ever thought of before. It's also a way of finding out more about oneself. I want to be more aware of what I can do, even if it means going too far..."

On September 15, 2009 Aram Khachaturian Concert Hall hosted the joint concert of the State Youth Orchestra of Armenia and Michel Legrand. During the concert entitled "The Umbrellas of Cherbourg", under the guidance music virtuoso the State Youth Orchestra of Armenia presented authored works by Maestro.

Also typical of Michel Legrand's character is that he rejects the concept of a career: "I hate the idea of goals, results, limits. I'm an artist, not a politician."

2014 sees Michel Legrand still performing 60 concerts across the globe...



Michel Legrand

Հատորի ստեղծմանն աջակցելու համար «Համահայկական աշխարհագրական ասոցիացիան» շնորհակալություն է հայտնում՝

Ժակի Աբկյանին	Մարգարիտա Ազարյանին
Աննա Նադդալյանին	Սիրանուշ Անանյանին
Էնդի Սլոշերին	Արմինե Կիրակոսյանին
Հասմիկ Պապյանին	Աստղիկ Տեր–Սահակյանին
Էլժբետա Պենդերեցկային	Արմեն Ալավերդյանին
Արա Բաբաջանյանին	Միեր Նավոյանին
Մարկով Անատոլիին	Լուսինե Սահակյանին
Դմիտրի Սամոյլովին	Գագիկ Շահազիզյանին
Տիգրան Գալստյանին	Մովսես Դեմիրճյանին
Մաչա Մերիին	Թովմաս Պողոսյանին
	Տեր Գրիգոր քահանա Մարկոսյանին

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝

Տիգրան Մկրտչյանին
Տիգրան Սարգսյանին
Արման Կիրակոսյանին
Էդգար Ղազարյանին
Վիգեն Զիտեչյանին
Շառլ Ազնավուրին

Լուսանկարները՝

Զուլիա Վեսելիի
Նելսոն Ադամսի
Անտոն Ալեքսենի
Ռութ Քրաֆերի
Արմեն Ադայանի
Վլադիսլավ Արտեմևի
Զին Ռադելի
Մարկո Բորգրևի
Քրիստինա Կազարեսի
Վսևոլոդ Յերյոմինի
Տիգրան Նազարյանի
Թամի Թանգի
Անդրեաս Կալիի
Վիլյամ Ռայմոնդի
Կայա Օսգեսգինի
Էնգին Սեբահի
Իշխան Ավագյանի
Ալինա Խուրշուդյանի
Կարոլ Նիենարտովիչի
Իեն Լենիցայի
Լուսինե Մկրտումյանի
Զորջ Նադերի
Վադիմ Արսենևի
Նադիա Եֆրեմովայի
Դմիտրի Լոբանովի

For support in preparing the volume the “Panarmenian Geographic Association” extends its gratitude to:

Jackie Abkian	Margarita Azaryan
Anna Naghdalyan	Siranush Ananyan
Andy Schlosser	Armine Kirakosyan
Hasmik Papian	Astghik Ter– Sahakyan
Elzbeta Penderecka	Armen Alaverdyan
Ara Babajanian	Mher Navoyan
Markov Anatoli	Lusine Sahakyan
DmitriSamoylov	Gagik Shahazizyan
Tigran Galstyan	Movses Demirtshyan
Macha Meri	Tovmas Poghosyan
	Fr Grigor Priest Markosyan

Ministry of Diaspora of the Republic of Armenia

Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia:

Tigran Mkrtchyan
Tigran Sargsyan
Arman Kirakosyan
Edgar Ghazaryan
Vigen Chitechian
Charles Aznavour

Photos by:

Julia Wesely
Nelson Adams
Anton Alexeyev
Ruth Crafer
Armen Aghayan
Vladislav Artemyev
Jean Radel
Marco Borggreve
Kristina Cazares
Vsevolod Yeryomin
Tigran Nazaryan
Tummy Toung
Andreas Kali
William Raymond
Kaya Özsezgin
Engin Sebah
Ishkhan Avagyan
Alina Khurshudyan
Karol Nienartowicz
Jan Lenica
Lusine Mkrtumyan
George Nader
Vadim Arsenyev
Nadia Yefremova
Dmitriy Lobanov